

ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ե

ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳՆ





ՀՐԱՄԱՆԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱՁՆԱԳՈՅՆԻ ԵՒ ՎԵՀԱՓԱՌՈ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՅՆ ՀԱՅՈՅ

ՀՈԳԵՎՈՐ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ե

Վ Ա Զ Գ Ե Ն Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ

Մ Ե Ր
Պ Ա Տ Ա Ր Ա Գ Լ

Բոլիսարեալ - 1945 թ.

ՄԱՅՐ ԱԹ-ՈՒ- Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷԶՄԻԱԾԻՆ - 2008

ՎԱԶԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Վ - 131 ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ: - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008.- 140 էջ:

Երջանկահիշատակ Հայրապետի սույն աշխատության մեջ քննության են առնված և դյուրըմբռնելի ոճով բացատրված ընդհանրապես քիստոնյա աշխարհի և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու խորհուրդներից ու արարողություններից մեջազումի՝ Սուրբ Պատարագի կարգն ու ընթացքը՝ կապված մեր Եկեղեցու դավանաբանական սկզբունքների ու ազգային ավանդների, մեր ժողովրդի կրոնական զգացումների հետ:

«Մեր պատարազն» իր որոշակի տեղն ունի հայ մեկնողական գրականության մեջ՝ վաղուց դառնալով դժվարագյուտ և ցանկալի մատյան: Այն առաջին անգամ լույս է տեսել ավելի քան քառասուն տարի առաջ Պուբլիչում, 1945-ին («Ալֆա» տպարան, 104 փոքրադիր էց), վազգեն վարդապետ Պալճան ստորագրությամբ:

Սույն իրատարակությունը 1990 թ. Մայր Աթոռում տպագրվածի վերահրատարակությունն է:

ԳՄԴ 86.37

ISBN 978-99930-75-78-3

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2008 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ելնելով մեր այսօրվա կրոնա-Եկեղեցական գրականության վիճակից, իրատարակության ենք պատրաստում մի մատենաշար, որի առաքելությունը պիտի հանդիսանա սնել մեր հավատացյալների հոգիները կրոնա-բարոյական սնունդով պարզ և հասկանալի լեզվով:

Այդ մատենաշարը կոչում ենք «ԼՈՒՍԱՂԲ-ՅՈՒՐ»:

Քրիստոնեական հավատքի աղբյուր հանդիսացող մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, մեր Եկեղեցում փառավորվում է որպես աղբյուր Լուսի:

Որովհետև Հիսուս վկայեց... «Ես եմ Լուսը աշխարհի»:

Իսկ մեր նախնիները երկրպագել և փառաբանել են այդ Լուսին՝ օրինաբանելով.

«Եկեք շինենք Լուսի սուրբ Խորանը,

Որովհետև Սրանով մեզ Լուս ծագեց

Հայաստան աշխարհի մեջ»:

Մատենաշարի նպատակն է տարածել Ավետարանի խոսքը, բացատրել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու քրիստոնեականը, նրա խորհուրդներն ու տոները, նրա պատմությունն ու դա-

վաճությունը, հաղորդակից դարձնել նրա աղոքք-ներին և շարականներին, սրբազն պատարագի խորհրդին ու սրբակենցաղ վարքով ապրած մարդկանց:

Մատենաշարի առաջին հատորը կազմում է Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի 1945 թ. Բուխարեստում տպագրած «Մեր պատարագի» արևելահայերեն տարբերակը:

«Մեր պատարագը» հստակ և պարզ ոճով բացատրված մի գրություն է, ուր հեղինակը բացարում է սրբազն խորհրդի ինաստն ու նշանակությունը հավատացյալի կյանքում:

Բարի երթ «Լուսաղբյուր»-ին:

«Մատիք առ Տէր եւ առէք զլոյս»:

(Մոտեցեք Տիրոջը և առեք Լույսը):

ԱՍՈՂԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Վեհափառ Հայրապետի սույն աշխատության մեջ քննության են առնված և դյուրընթռնելի ոճով բացատրված ընդիանրապես քրիստոնյա աշխարհի և Հայաստանյաց Առաքելական Ս. Եկեղեցու խորհուրդներից ու արարողություններից մեծագույնի՝ Սուրբ Պատարագի կարգն ու ընթացքը՝ կապված մեր Եկեղեցու դավանաբանական սկզբունքների ու ազգային ավանդների, մեր ժողովորդի կրօնական զգացումների հետ: Եվ ամեն անգամ՝ հստակ ու խորինաստ լուսաբանություններով: Տեղինակն ուսուցանում է, որ թեպետև կրօնական զգացումն իր խորքի մեջ ազգային բնույթ չունի, սակայն իր պատմական զարգացման մեջ ծեռք է բերում տվյալ ժողովորդի, ներկա դեպքում հայության, պատմական ճակատագրով պայմանավորված ուրույն ծևեր ու երանգներ, որոնք իրենց որոշակի որոշմն են թողնում հայ մարդու հոգեկան կերտվածքի ու բնավորության վրա՝ միշտ և ամենուր կանգնեցնելով նրան խղճի դատաս-

տանի առջև, պարտադրելով անկեղծորեն քննելու երկրային կյանքում կատարած չար ու բարի գործերը և ձգտելու բարուն ու կատարյալին, որովհետև իսկական բարոյական հերոսությունը բացարձակ անկեղծության մեջ է:

Համակողմանիորեն քննելով ապաշխարության, մեղքերի քավության և ինքնակատարելագործման հնարավոր ուղիները, որոնց ընթացքում շատերը՝ սարսափած իրենց իսկ գործած մեղքերից, փարուն են մահվան գաղափարին ու հանցափորձության, Յայոց Պատարագի այս խորատես Մեկնիչն իր ծանրակշիռ առարկություններն է մեջտեղ բերում, Յայոց Պատարագի բուն խորհրդից բխող կենսահաստատ հետևություններ անում: «Մահօ պատիժ մը չի կրնար ըլլալ,- ասում է նա, - այլ պատիժե փախուստ մը, իսկ անձնասպանությունը ո՛չ թե հերոսություն, այլ տկարություն, դասալքություն: Իսկական հերոսությունը ապրիլն է, և մեղքերեն և սխալներեն իսկապես ազատվելու միակ ճանապարհը բարի գործքով զանոնք հատուցանելը... աշխարհի չարը բարիի վերածելը...»: Իրապաշտ ու վեհ են հնչում Վեհափառ Յայրապետի եզրափակիչ խոսքերը. «Միայն բարի ու արդար գործի և ստեղծագործ, շինարար աշխատանքի ճամբուն վրա է, որ մարդը... կը

զգա արարչական ուժերու զարթնումը իր մեջ»:

«Մեր պատարագն» իր որոշակի տեղն ունի հայ մեկնողական գրականության մեջ՝ վաղուց դառնալով դժվարագյուտ և ցանկալի մատյան: Այն առաջին անգամ լույս է տեսել ավելի քան քառասուն տարի առաջ Պուբլեշում, 1945-ին («Ալֆա» տպարան, 104 փոքրադիր էջ), **Վազգեն Վարդապետ Պալճյան** ստորագրությամբ: Ըստ որում՝ շապիկի վրա որոշմված է միայն համառոտ խորագիրը՝ «Մեր պատարագը», իսկ անվանաթերթի վրա՝ նաև ընդարձակ ենթավերնագիրը. «Յայտանյայց Եկեղեցվո Ս. Պատարագի խորհուրդը՝ բացատրված հավատացյալ Ժողովուրդին համար»: Գիրքը նվիրված է Շապին Գարահիսարցի հայուհի Վերնիքա Ա. Տեր-Մեսրոպյանի հիշատակին (1875-1944):

Սույն տպագրությունը կատարված է նույն այդ գրքից*:

Աշխատության բնագրի մեջ առատ են Յայոց պատարագամատույցից քաղված բառացի հատվածները (գրաբար): Դրանք բոլորը վերստին համենատված են Պատարագամատույցի ամենաեղինակավոր հրատարակության հետ («Խորհրդա-

* Այս արևելահայերեն լրարդերակը թարգմանված է 1988 թ. վերսալապարակությունից:

տետր Սրբոյ Պատարագի ըստ ծիսի առաքելական սուրբ Եկեղեցոյ Հայաստանեայց», Դ տիպ, Վաղարշապատ, 1880), որը բնույթով գիտաքննական է, և արված են անհրաժեշտ սրբագրումներ:

ՊՐՈՖ. Պ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՆԿԻՐՎՈՒՄ Է ՎԱԶԳԵՆ Ա
ԱՄԵՆՅԱՆ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՌԻԿՈՒՄ
ԾՆՍԴՅԱՆ 100-ԱՄյակԻՆ

ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ

Հայաստանյաց Եկեղեցվո Սուրբ
Պատարագի Խորհուրդը
Բացատրված հավատացյալ Ժողովրդի
համար:

«Որ ուտէ զՄարմին իմ եւ ընպէ զԱրիւն իմ,
յիս բնակեսցէ եւ ես ի ննա»:
(Ով ուտում է իմ մարմինը և
ընպում իմ Արյունը, կրնակվի իմ մեջ,
և ես՝ նրա մեջ):

(Հովհ. Զ, 57):

«Ձայս արարէք առ ինոյ յիշատակի»:
(Արե՛ք այս հիշատակի համար):

(Ա Կորնթ. ԺԱ, 24):

«ճաշակեցէք եւ տեսէք
զի քաղցր է Տեր. Ալելուիա»:
(Ճաշակեցէք և տեսէք
որ քաղցր է Տերը. ալելուիա):

(Ս. Պատարագ)

ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ

Մի օր ձեռքս անցավ 18-րդ դարի վերջին տարում կ. Պոլսում հրատարակված մի գիրք, որտեղ խոսվում է Ս. Պատարագի և այլ խորհուրդների մասին՝ հետևողությամբ Խոսրով Անձևացու և Ներսես Լամբրոնացու մեկնությունների, որոնք 10-12-րդ դարի հեղինակներ են:

Գրքի հեղինակը՝ Հովհաննես Արճիշեցին, իր առաջաբանի մեջ, ի միջի այլոց հետևյալ տողերն է գրում.

«Բայց տեսանեմք զսոսա, որք ի մերումն են ժամանակի. զի ոչ ունին զնոյն փոյթ յանձինս իւրեանց. այլ՝ կամ իսկ ո՞չ առնեն փոյթ գրոց ընթերցուածոց. և կամ թէ ընթեռնուն, և ո՞չ քննեն զմիտս գրելոցն: Այլ Է՛, զորս ի գիրս ընթեռնուն և ո՞չ իմանան, և Է՛, զոր ի բերան առեալ՝ ասեն հանապազ և ո՞չ գիտն, ո՞չ հասկանան, որպէս զՍադմոսն Դաւթի և զսոյն իսկ զաղօթս Խորհրդոյ պատարագիս»:

(Սակայն տեսանում ենք սրանց, որ մեզ ժամանակակից են, քամի որ նույն շանքը չունեն իրենց մեջ:

Այլ, կամ ճունիսկ կարևորություն չեն տալիս Սուրբ Գրոց ընթերցումներին, և կամ, եթե կարդում են, երբեք չեն քննում գրածների միտքը: Կամ մաս, որ գրքերը կարդում են և չեն ըմբռնում: Եվ կա՞ն, որ անգիր արած միշտ ասում են, սակայն, ո՞չ էլ հասկանում են, ինչպես Դավթի Սաղմոսները և անգամ Պատարագի Խորհրդի այս աղոթքները):

Այս տողերը գրավեցին իմ ուշադրությունը. այնտեղ հեղինակը գանգատվում է, թե իր ժամանակի հավատացյալները անտարբեր են Ս. Գրքի հանդեպ, կամ կարդում են, բայց կարդացածների միտքը չեն քննում, և կամ բոլորովին չեն հասկանում: Մինչ ուրիշները անգիր գիտեն ու ամեն օր արտասահնում են Սուրբ Գրքերի խոսքերը՝ առանց, սակայն, սովորածների իմաստն ըմբռնելու:

Այս տողերը կարդալով մտածեցի. հապալ օրերի հայ հավատացյալը ի՞նչ վիճակի մեջ է իր տեսակետից:

Դժվար չէր պատասխանը տալ:

Մեր եկեղեցի հաճախողների մեծամասնությունը ոչ միայն չի կարդում Ս. Գիրքը, այլ բնավ չի հասկանում եկեղեցում կարդացվածը: Ավելին՝ մեր ժողովրդի մեծ մասը և, մանավանդ, մեր նոր սերունդները չգի-

տեն եկեղեցական արարողությունների իմաստը անգամ տարրական չափով:

Ինչի՞ համար այսքան անտարբերություն և անգիտություն:

Պատճառը ժողովրդի անհավատ լինելը չէ, և, ոչ էլ երբեք հարգանքի պակասը՝ Հայաստանյայց եկեղեցու հանդեպ:

Պատճառներից գլխավորը, մեր կարծիքով, այն է, թե բացատրող և սովորեցնող չկա:

Բացատրող ու սովորեցնող չկա ո՛չ ընտանեական հարկի տակ, ո՞չ դպրոցում, ո՞չ եկեղեցում կամ եկեղեցուց դուրս՝ հոգեռականների կողմից: Ո՞չ էլ գրականությունն կա այս նպատակով:

Նույնիսկ մի անհատ, որ ինքնիրեն հավատացյալ չի կարծում, կարծում ենք, որ պարտական է ծանոթանալու և հասկանալու այդ արարողությունների նշանակությունը, խորհուրդը և դրանից հետո է, որ խորհրդածելով և դատելով՝ կարող է տալ իր վերջնական վճիռը իր բոնած դիրքի մասին կրոնի և եկեղեցու հանդեպ:

Զարմանքով ենք նկատում, որ ցարդուկներ հրատարակություն չկա, որ ժողովրդը 2 - Մեր պատարագը

դին պարզ ու հասկանալի ձևով բացատրի Ա. Պատարագի արարողությունը:

Մեր մեջ կա մի դժբախտ մտայնություն, մանավանդ հոգեորական դասի մեջ, այն է՝ իմացածը ուրիշին չսովորեցնել, կարծես, կրոնական արարողություններն ու խորհուրդները գաղտնիքներ լինեն և մի տեսակ մենաշնորհ, որ պետք չէ ուրիշին և շատերին փոխանցել, որպես գաղտնի գիտություն:

Ժողովրդի արարողությունների իմաստին անհաղորդ մնալու և նորերը չպատրաստելու պատճառներից մեկն էլ այս մտայնությունն է:

Մեր համոզումը այն է, թե կրոնական խորհուրդները բացատրելով, աղոթքները և այլ ծիսակատարությունները հասկանալի դարձնելով, եկեղեցական երգերը սովորեցնելով մեր նոր սերունդներին, գեթ ոմանց մեջ կարթնանա եկեղեցական կոչում: Եվ մեր եկեղեցին, այդպիսով, կկարողանա իր համար նոր սպասավորներ պատրաստել:

Բայց, կարծես, ճիշտ սրան հակառակ են մտածում մեր հները, մեր ծերերը՝ լինեն նրանք դպիր, քահանա կամ բարձրաստիճան հոգեորական: Եվ այս, իսկապես, հակառակ

է քրիստոնեական ոգուն և մեր ազգային եկեղեցու կենսական շահերին:

Պողոս Առաքյալը իր թղթերից մեկում ասում է. «...որպեսզի միախարվեն նրանց սրտերը՝ մեկտեղված սիրով և կատարյալ իմաստության ամենայն ճոխությամբ՝ ի գիտություն Աստուծո խորհրդի ի Քրիստոս Հիսուս» (Կողոսացիս Բ, 2):

Այսինքն՝ պատվիրում է բոլոր մարդկանց սրտերը միսիթարել և անխտիր բոլորին սովորեցնել Աստուծո խորհուրդների գիտությունը:

Քրիստոսի եկեղեցին գաղտնիքներ չունի ոչ մեկի համար: Նրա բոլոր խորհուրդները, բոլոր արարողությունները և գաղափարները պետք է բոլորի սեփականությունը լինեն: Քրիստոնեությունը ժողովրդական կրոն է և չի ընդունում որևէ խմբակցական, առանձնաշնորհյալ, դասակարգային, կաստայական դրություն կամ հոգեբանություն:

Այս խորհրդածության գործնական եղրակացությունը թող լինի մեր ժողովրդի բոլոր խավերի մեջ Ավետարանի խոսքը տարածելը, բացատրելը, մեր եկեղեցական արարողություններն ու ծիսակատարությունները հասկանալի դարձնելը և ժողովրդին ու մեր մա-

նուկներին, պատանիներին հոգեոր աղոթք-ներ ու եկեղեցական երգեր սովորեցնելը:

Աչա թե ինչու մեր մտքի մեջ գաղափարը ծնվեց մեր քիչ իմացածից բաժին հանել մեր ընթերցասեր ժողովրդին և այսպիսով օգտակար լինել հոգեոր կյանքի ամրապնդմանը:

Մեր իղձն է մանավանդ, որ մեր պատանիներն ու երիտասարդներն անպայման կարդան սույն գրությունը և մի քիչ էլ խորհրդածեն աստվածային խոսքերի մասին:

Հետևաբար, գրի ենք առնում և մեր հավատացյալների տրամադրության տակ ենք դնում Ս. Պատարագի «ահավոր և սարսափելի խորհրդի» մեկնությունը պարզ ու հասկանալի բացատրություններով ու ծանոթություններով՝ այն բոլորին մատչելի դարձնելու նպատակով:

Վստահ ենք, որ ամեն հայ սիրով պիտի իր ձեռքն առնի սույն գրքույկը ու անպայման պիտի ուզի կարդալ ու հասկանալ այն խորհուրդը, որ մեր ժողովուրդը դավանում է երկու հազար տարիներ ի վեր և պահում և պահպանում է որպես սրբություն սրբոց:

Իհարկե, հետաքրքիր և հույժ օգտակար պիտի լիներ, եթե մեր սույն աշխատության

նյութ անեինք եկեղեցական բոլոր արարողությունների բացատրությունը, սակայն մենք առայժմ գոհանում ենք միայն Ս. Պատարագի մեկնությամբ՝ ապագային թողնելով ավելի մեծ մի աշխատության ծրագիր:

Պատարագի Ս. Խորհրդին մոտենալու համար նախ պետք է հարց տանք մեզ, թե ի՞նչ զգացում, ի՞նչ գաղափար և ի՞նչ հոգեկան անհրաժեշտություն են մղում հավատացյալին դեպի եկեղեցի: Կամ, ավելի պարզ խոսելու համար՝ հոգեկան ի՞նչ պահանջից մղված, ի՞նչ զգացումով տողորված պետք է եկեղեցի գա խսկական հավատացյալ մարդը:

Այս հարցը տալիս ենք, որովհետեւ գիտենք, թե մեզանից շատ-շատերը եկեղեցի են գալիս բուն նպատակից բոլորովին հեռու տրամադրություններով և մղումներով: Թվենք մի քանի այդպիսի պարագաներ.

ա) Ոմանք եկեղեցի են գալիս իբրև ժամանցի տեղ, այնպես, ինչպես զբոսանքի կամ թատերական ներկայացման պիտի գնային:

բ) Ոմանք էլ եկեղեցի են գալիս մարդ տեսնելու, խոսակցելու կամ իրենց հագուստներն ու զարդերը ցուցադրելու:

Այսպիսի մարդկանց, բնականաբար, պետք

է դատապարտել, ապա սովորեցնել և բացատրել եկեղեցի գալու բուն նպատակը:

գ) Կա մարդկանց մի ուրիշ դաս, որ եկեղեցի է գալիս ըստ ավանդական սովորության, մի տեսակ որպես ազգային պարտականություն, որպես հայկականության ապացույց իրենց խղճի և ուրիշների առջև:

Բնական է, որ դատապարտելի չէ այս պատճառը, և լավ է, որ մարդ սովորության վերածի որևէ լավ գործունեություն, սակայն պայմանով, որ այդ սովորությունը լոկ ձև չդառնա, այլ իր խորքի իմաստն ու նշանակությունը պահի, որ մեր մի շարք հավատայների պարագան չէ:

Հետո մի ուրիշ խնդիր էլ է ծագում այստեղ, այն է՝ ազգայինի և եկեղեցականի հարաբերությունը: Մենք միշտ կրկնում ենք, թե մեր եկեղեցին ազգային եկեղեցի է, թե հայկական հաստատություն է. և դա կատարյալ ճշմարտություն է, սակայն, սա չի նշանակում, թե եկեղեցի գալը պարզապես ազգային մի պարտականություն է: Բավական չէ, որ մարդ մի լավ հայ լինի իր մյուս պարտականությունների մեջ, որպեսզի հայ եկեղեցու լավ հավատացյալ նկատվի: Ինչ-

պես որ, եթե մի լավ հայ, որ իր համոզումներով հավատացյալ չէ, դա երբեք չի նշանակում, որ այդ մարդը դադարում է լավ հայ լինելուց:

Բուն կրօնական զգացումը իր խորքի մեջ ազգային բնույթ չունի: Բայց իր պատմական կազմավորման, զարգացման և դրսեորման մեջ, այս, տվյալ ժողովրդի ուրույն ձևերն է ստացել, այսինքն՝ ժողովրդի հոգեկան և պատմական զարգացման հատուկ դրոշմը:

Այլ բացատրությամբ՝ եկեղեցին իր խորքով զուտ հոգեոր, տիեզերական մի երկույթ է, իսկ իր ձևով՝ ազգային: Ուրեմն, ակներեէ, թե եկեղեցի գալու հոգեկան անհրաժեշտության զգացումը չպետք է շփոթել ազգային գիտակցության հետ:

դ) Շատերը եկեղեցի են գալիս հրապուրված Ս. Գրքի ընթերցումների և զանազան աղոթքների բանաստեղծականությամբ, մեր եկեղեցու զմայլելի երաժշտությամբ կամ եկեղեցու քանդակների և նկարների ձևերից, գույներից ու պատկերներից:

Իրապես գեղարվեստական հաճույք են պատճառում այս բոլորը և ամեն մի քաղա-

քակիրթ մարդու հոգուն խոսում են խորապես և նրան բարձրացնում են դեպի գեղեցիկ աշխարհը, սակայն սխալ պիտի լիներ այդ գեղարվեստական հաճույքը շփոթել կրոնական նպատակի հետ:

Աղոթքների ու երաժշտության բանաստեղծությունը լոկ միջոցներ են բուն հոգեոր ապրումին բարձրանալու համար:

Վերը հիշված հեղինակը՝ Հովհ. Արճիշեցին, այսպես է մեկնում բանաստեղծության և երաժշտության իմաստը եկեղեցում.

«Հեշտալուր երգք սաղմոսացն եւ շարականացն քաղցրացուցանեն զլսելիս ժողովրդեանն, զի մաքրեսցին ի մտաց նոցա մարմնական հոգքն եւ երգովքն միասցին առ Աստուած»:

Այսինքն. «Սաղմոսների և շարականների հեշտալուր երգերը քաղցրացնում են ժողովրդի լսողությունը, որպեսզի նրանց մտքերից մաքրվեն մարմնական հոգսերը, և երգերով միանան Աստուծոնետ»:

Այս տողերը շատ պարզ ձևով ճշտում են բանաստեղծության և երաժշտության արժեքն ու նպատակը եկեղեցական արարողությունների մեջ:

Ե) Վերջապես՝ կան մարդիկ, որոնք եկեղեցին աղօթքների մեջ:

ղեցի են գալիս աղոթելու համար ի ցույց մարդկանց կամ իրենք իրենց խաբելու, այդ մի քանի աղոթքներով իրենց մեղքերը մաքրված կարծելով։ Ու գոհ, հաղթական տրամադրությամբ մեկնում են տուն։

Այդպիսին է Գրիգոր Զոհրապի «Մեղա, Տե՛ր» նովելի մեջ նկարագրված հերոսը։ Մի մարդ, որ շաբաթվա վեց օրը ուրիշի աշխատանքն է շահագործում, նրա արդար քրտինքի իրավունքն է հափշտակում, խաբում է ու կեղծում, իսկ յոթերորդ օրը, եկեղեցում, ժողովրդի ներկայությամբ, իր «Մեղա, Տե՛ր»-ն է աղոթում՝ վստահ լինելով, որ անոխակալ ու միշտ ներող Աստված իրեն էլ կների։ Ու հաջորդ օրը, երկուշաբթի, իր նույն «գործերն» է շարունակում թեթև խղճով։ Ինչ փույթ, թե բոլոր «գործերն» էլ մաքուր ու բարի չեն։ Զէ՞ որ հաջորդ կիրակի կրկին եկեղեցի պիտի գնա աղոթելու և թողություն ստանալու համար։

Ահա Աստուծո բարությունը շահագործող մարդու մի տիպար, որ խաբում է ոչ միայն իր նմաններին, այլ նաև իր սեփական խիղճը։

Ուրեմն, ո՞րն է այն հիմնական զգացու-

մը, որ մարդուն պետք է մղի գեղի եկեղեցի, գեղի Ս. Պատարագի խորհուրդը: Ճիշտ պատասխանը կդտնենք՝ մտաբերելով ու քննելով Ավետարանի մեջ Հիսուսի պատմած մի առակը, որ Հայտնի է «Մաքսավորն ու Փարիսեցին» անունով (Ղուկաս ԺԸ, 10:14): Երկու մարդ տաճարի մեջ, իրարից հեռու կանգնած այնպես էին աղոթում, որ մեկը մյուսի ասածը չէր լսում: Մեկը Փարիսեցի էր, այսինքն՝ հարուստ և օրինապահ դասակարգից մի հրեա, որ ընկերային պատվավոր դիրք ուներ, ինչպես իր դասակարգին պատկանող բոլոր անձերը: Փարիսեցիները օրենքները հարգող և, նույնիսկ, երբեմն էլ բարի գործեր կատարող մարդիկ էին, որով նրանք հարգված էին ժողովրդի կողմից, որպես տիպար Հայրենակիցներ՝ կրոնական և ազգային իմաստով, որովհետեւ այդ դասակարգի մարդիկ հռոմեացիների դեմ կանգնող մտայնության առաջնորդներն էին և պաշտպանում էին հրեա ժողովրդի քաղաքական անկախության գաղափարը: Իսկ մյուսը՝ պարզ ու հասարակ մի հրեա, որ մաքսի գործերով էր զբաղվում, որի համար կոչվում էր Մաքսավոր, մի գործ, որ հաճախ խարերա-

յության գործի էր վերածվում: Մաքսավորները, ընդհանրապես, անիրավություններ և զեղծումներ էին անում ի շահ իրենց գրպանի: Այդ պատճառով՝ «մաքսավոր» անունը հրեա ժողովրդի համար «խարերա» իմաստն էր ստացել:

Փարիսեցին թևերը տարածած, մի քիչ հապարտ ու ինքնագոհ կեցվածքով՝ բարձրածայն աղոթում էր Աստծուն. «Աստված իմ, գոհ եմ քեզնից, որ ես ուրիշ մարդկանց նման հափշտակող, անիրավ ու շնացող չեմ, և կամ ինչպես այս մաքսավորը, այլ շաբաթը երկու անգամ պաս եմ պահում և տասանորդն էլ եմ տալիս իմ ողջ շահածից»:

Իսկ մաքսավորը, ավելի հեռու կանգնած, վախով ու գողով, հազիվ համարձակվելով աչքերը վեր բարձրացնել՝ իր կուրծքն էր ծեծում և ասում. «Աստված, ներիդ ինձ՝ մեղավորիս»:

Այս առակը պատմելուց հետո Հիսուս եղարակացնում է. «... սա իշավ իր տունը արդարացած, ոչ թե մյուսը», այսինքն՝ Մաքսավորը ավելի շատ թողության արժանացած ու ավելի արդարացած վիճակի մեջ իր տունը պիտի գնա, քան թե Փարիսեցին:

ԵՎ ԱՎԵԼԱՑՆՈՒՄ Է ՀԻՄՈՒՄ. «... ով որ բարձրացնում է իր անձը, կտոնարհվի, և ով որ խոնարհեցնում է իր անձը, կբարձրացվի»:

Պարզ է, ուրեմն, թե հակառակ որ խորքի մեջ Մաքսավորը ավելի մեղավոր էր, սակայն, որովհետև նրա անկեղծությունը, նրա զղջումի խոր գիտակցությունը և աղոթելու, խնդրելու ջերմ զգացումը ավելի ուժեղ և մաքուր էին, նրան ավելի «արդարացած» դարձրին, քան մյուսը, որ աղոթում ու մարդկանց և Աստուծո առաջ ինքն իրեն էր գովում:

Այս առակը, ահա, բավական է մեզ ցույց տալու այն ճշմարիտ ոգին, որով պետք է տոգորփած լինի հավատացյալը, երբ եկեղեցի է մտնում, երբ պատրաստվում է մասնակցելու Ա. Պատարագին:

Անմիջապես ասենք, որ այդ ճշմարիտ ոգին անհատական մեղքի գաղափարն է, մեղավոր/էակ լինելու զգացումը, սխալական լինելու և մարդկային չարիքի համար տառապող մի հոգի լինելու գիտակցությունը:

Որովհետև «Ո՞վ է այն մարդը, որը ապրում է և չի մեղանչում»:

Ահա գիտակցական-զգացական ներքին պայմանը, որ, որպես մղիչ ուժ, հոգեկան

անհրաժեշտություն է ստեղծում Աստուծո տունը գալու և աղոթելու:

Միայն մեղավոր ու սխալական լինելու գիտակցությամբ է, որ աղոթքը իմաստ է ստանում:

Միայն այն ժամանակ կարող ենք մի խնդրելիք ունենալ. միայն այն ժամանակ կրոնական-հոգեկոր մթնոլորտ կարող ենք ապրել: Այն ժամանակ միայն եկեղեցական երաժշտության քաղցրությունը կարող ենք լիովին ըմբռչինել, այն ժամանակ միայն կարող ենք թափանցել սրբերի տանջված դեմքերի էության մեջ, այն ժամանակ միայն կարող ենք Հիսուսին ճանաչել: Վերջապես՝ միայն այն ժամանակ կարող ենք ըմբռնել Ավետարանը և այն ժամանակ է, որ կարող ենք նաև հասկանալ Ս. Պատարագի խորհուրդը:

Քրիստոնյա հավատացյալի մեղքի գիտակցությունը, մեր համոզմամբ, ունի հետևյալ հոգեբանական զարգացման աստիճանները.

- ա) ինքն իրեն քննադատել,
 - բ) ինքն իրեն պատժել,
 - գ) ինքն իրեն ուղղել:
- Հայտնի է, որ մարդն այն էակն է, այն**

միակ էակը, որ ունի ինքը իր գիտակցությունը, հասկանում է իր կատարած չարն ու բարին, հետևաբար գիտակցում է, որ իր կատարած գործերի համար պատասխանատու է, և իր այդ բարի ու չար գործերը դատելու հնարավորությունն ունի իր ներքին գիտակցական աշխարհի առաջ, որը ոչ գիտական ընդհանուր մի բառով կոչում ենք խիզճ։
Խրիմյանը այսպես է սահմանում։

«Խիզճը հաշվեապահանց ուստիկան է, որն իբրև դատավոր, արտի աթոռի վրա բազմած, խալթահարում է միշտ»։

Մեր ինքնաքննությունը կամ ինքնաքննադատությունը, որ պետք է կատարենք Աստուծու առջև, ահա այդ խորհի դատաստանի միջնորդությամբ է, որ պիտի կատարվի։ Որովհետև կատարյալ խիզճը, որպես կատարելության, ճշմարտության և բարության մարմնացում և ներքին ձայն, ուրիշ բան չէ, եթե ոչ Աստուծու ներկայությունը մեր հոգիների մեջ։

Ինքն իրեն քննելու, քննադատելու համար նախ անհրաժեշտ է բացարձակ անկեղծություն՝ անվախ ու վճռական։ Անկեղծ լինել ինքն իր հանդեպ ամենադժվար գործերից մեկն է, շատերի համար հոգեկան անկա-

րելիություն։ Ինքն իր հանդեպ բացարձակ անկեղծ լինելը բարոյական հերոսություն է, որին միայն քչերը կարող են հասնել։ Որոշ չափով էլ դաստիարակության հարց է։

Ինքնաքննության և քննադատության մեթոդը կիրառվում է նաև մանկավարժության և այլ մարզերի մեջ։

Հոգեկան երկրորդ գործողությունը, որ պահանջվում է ճշմարիտ հավատացյալից, ինքն իրեն կամովին պատժելու հանձնառությունն է։

Ինքդ քեզ անկեղծորեն քննելով հաստատում ես սխալդ, մեղքդ, նրա չափն ու խորությունը։ Տեսնում ես սխալական էակ լինելդ։ Հետևաբար, խիզճդ, որ այդ պարագաները հաստատեց, քեզ թելադրում է, որ մեղքերդ քավես։ Ուրեմն, մի պատիժ կրելու, մի զրկանք ապրելու գաղափարն է, որ ծնվում է մեղավոր ու սխալական ամեն հոգու մեջ, ամեն ազնիվ հոգու մեջ։ Պատժի գաղափար գրեթե բոլոր կրոններն էլ ունեն և նրանցից շատերի մոտ արտահայտվում է բարբարոս ու վրեժինդիր ձևերով։

Ահա, օրինակ, ճապոնացիների «Հարաքիրի» կոչվածը, որ կատարվում է կրոնական

արարողության ձևի տակ: Իր խղճի առջև ծանր մեղքով մեղավոր զգացող ճապոնացին դաշույնը իր փորն է խրում ու իր աղիքները կտրելով՝ հոգին ավանդում է այն գիտակցությամբ, թե ինքն իրեն պատժեց և իր Աստուծո առաջ իր մեղքը քավեց հերոսաբար:

Քրիստոնեությունը ո՞չ այդպիսի պատիժ է ընդունում, ո՞չ այսպես մեղքերի թողություն է ըմբռնում և ո՞չ էլ որևէ ձևով կատարված անձնասպանությունը հերոսություն է նկատում:

Ընդհակառակը, մահը պատիժ չի կարող լինել, այլ փախուստ պատժից, իսկ անձնասպանությունը ոչ թե հերոսություն, այլ թուլություն է, դասալքություն:

Իրական հերոսությունը ապրելն է, և մեղքից ու սխալից իսկապես ազատվելու միակ ճանապարհը՝ բարի գործերով դրանք հատուցելը: Այստեղ, ահա, սկսվում է երրորդ հոգեկան պահը, որ է բարի գործով մեղքը քավել: Ինքն իրեն ուղղել բարիք գործելով՝ ահա դրա մեջ է կայանում փրկությունը «մեր անձերի»:

Դրա համար է, որ պատարագիչ քահանան սեղան չբարձրացած աղոթում և մաղ-

թում է ժողովրդին. «Ժամանակ թող տա՝ ապաշ-խարելու և բարիք գործելու»:

Ահա քրիստոնեության ըմբռնումը աշ-խարհի չարը բարու վերածելու նկատմամբ:

Սա բարոյական բարձր գագաթի հասնող մի գաղափար է, որ նոր հեղափոխություն ստեղծեց մարդկային գիտակցության մեջ:

Այսպես, ուրեմն, դասավորվում են հա-վատայցալի հոգեկան աշխարհի մեջ ներքին ապրումներն ու զգացումները:

Առանց մեղքի գիտակցության չկա խիղճ, առանց խղճի չկա մեղքի գիտակցություն, իսկ առանց այդ երկուսի չկա զղջում և բա-րիք գործելու կամեցողություն, առանց բա-րի ու շինարար գործի չկա Քրիստոս, չկա փրկություն, չկա Աստուծո արքայություն:

Միայն բարի ու արդար գործի և ստեղծագործ, շինարար աշխատանքի ճանապարհի վրա է, որ մարդը, մի պահ, գոնե, զգում է ա-րարչական ուժերի արթնացումը իր մեջ: Իսկ գործի լրումին հասնելով՝ զգում է իր մաս-նակցությունը Աստուծո արքայության, այ-սինքն՝ հավիտենականության:

Ուր որ չկա մեղավոր և սխալական լինե-լու զգացումը, ուր որ չկա խղճի դատաս-
3 - Մեր պատարագը

տան, ուր որ չկա մարդկային չարիքների գիտակցություն, այնտեղից հեռանում են Աստված և Քրիստոս, որ աշխարհ եկավ այն նպատակով, որ մարդկանց ցույց տա այդ խղճի ներկայությունը հոգիների մեջ։ Նա ցույց տվեց մարդկանց մեղքերից և սխալներից մաքրվելու, ազատվելու միջոցը, որ բարի գործն է, փրկության ճամփան, որ շինարար ու ստեղծագործ աշխատանքն է Աստուծուարքայությունը, որ ճշմարիտի, բարու և գեղեցիկի ապրումն է հոգիների մեջ, սիրո և խաղաղության մի աշխարհում։

Այս լույսով առաջնորդվելով, այս ճանապարհից քայլելով է, որ մարդ արժանի է դառնում մեղքերի թողության, այսինքն՝ խղճի հետ հաշտ ու թեթև սրտով, ներքին ինքնագության ու երջանկության գերագույն ապրումն է ունենում, որը ուրիշ բան չէ, եթե ոչ Աստուծուարքայության հայտնությունը մարդկային հոգու մեջ։

Աստուծուարքայությունը այն գերագույն պահն է, որ իրականանում է մեր մեղավոր ու անցավոր կյանքի, մեր հողեղեն գոյության մեջ։

Եվ այդ չէ^o, որ խնդրում ենք հանապա-

զոր. «Հայր մեր, որ երկնքում ես... թող քո արքայությունը գա... ինչպես երկնքի մեջ, այնպես էլ երկրի վրա...»։

Մեր Ս. Հայրապետների գրությունների մեջ բազմաթիվ են ներշնչված էջերը, որտեղ իրենց մեղքերը ողբում են այնքան խոր ու գեղեցիկ կերպով։ Գաղափարի անկեղծության և զգացումի մաքրության զմայլելի է-ջեր են՝ հորինված բանաստեղծական թռիչքով, որոնք կազմում են մեր հոգեւոր ու գրական ժառանգության թանկագին գոհարները։

Ահա, որպես օրինակ ներսես Շնորհալու «Աշխարհ ամենալայն»-ից հետեւյալ մի քանի տները.

Երբեմն լուս էի,
Ալժմ խավար եմ
Եվ մահվան ստվեր։

Ես ինչպէս պատմեմ
Թիվը մեղքերին,
Քանզի շատ-շատ եմ։

Երկինք և երկիր,
Եկեք, ողբացեք
Անձն իմ եղկելի։

Ընտրեցի չարը,
Կամովին ընդունեցի
Հովը մեղքերի։

Մեղքերի ճաշակմամբ
Մահը ճաշակեցի,
Հարուստս աղքատացա:

Հոգին՝ անկենդաճ,
Միտքս՝ մոլորյալ,
Կա՞ն միայն մարմնով:

Ծտապիր, ա՞նձ ի՞ն
Փախչել չարիքից,
Բարին ցանկանալ:

Քեզ մոտ միշտ համարիր
Մահվան քունը երբ գա,
Քննո՞ղ դատավոր:

Կամ Գրիգոր Նարեկացու այս չարչարագին մտածումները.

Մեղա՛ ես մեծիդի բարերարության,
Անարգս մեղա՛.
Մեղա՛ ծագումին ճառագայթմերիդ,
Խավարս մեղա՛,
Մեղա՛ շնորհիդ երախտիքմերին,
Արդարս մեղա՛.
Մեղա՛ երկնային գթառատ սիրուդ,
Հայտնապես մեղա՛.
Մեղա՛ արարչիդ՝ անէությունից,
Հավաստյալ մեղա՛.
Մեղա՛ գերազովն զոգիդ զոգալիր,
Անասինան մեղա՛.
Մեղա՛ աննվազ լուսիդ վայելման,
Նենգողս մեղա՛.

Մեղա՛ քո անճառ կյանքի ճաշակման,
Բազմիցս մեղա՛.

Մեղա՛ քո անճառ շնորհատրման,
Հանապազ մեղա՛.

Մեղա՛ խնկելի մարմնիդ Աստուծո,
Մահու չափ մեղա՛.

Մեղա՛ պաշտելի արյան արարչիդ,
Խսկապես մեղա՛: (Բամ իէ՛, Բ):

Որ մեզ՝ մարդկանց համար
Ու մեր փրկության համար»:
(«Հավատամք»)

Խոսեցինք մեղքի գիտակցության մասին,
Խոսեցինք ներքին այն ապրումների մասին,
որով մարդը ինքն իր և Աստուծո հետ խոսքի
նստելով է քննում ինքն իրեն իր խղճի
առջև ու բարի գործի, շինարար ու ստեղծագործ
աշխատանքի ճանապարհով հասնում
է բարոյական ներքին երջանկության զգացումին, որը կրոնական բացատրությամբ՝
հոգու փրկության զգացումն է:

Այս փրկության գաղափարին հասնող
մարդկային տիպարը ֆառուսն է, բայց
աստվածային տիպարը ինքը՝ Հիսուսն է, Աստուծո և մարդու Որդին:

Հիսուսի հավիտենական արժեքը ոչ
միայն իր խոսքերի, իր հեղափոխող նոր գա-

ղափարների մեջ է կայանում, այլ, մանավանդ, իր կյանքի օրինակի մեջ:

Եվ ո՞րն է Հիսուսի կյանքի մեծագույն երկույթը, ո՞րն է նրա գերագույն գործը:

Դա, իր կամովին զոհվելն է մի մեծ գաղափարի, մի մեծ ուխտի հաղթանակի համար:

Վերը խոսեցինք և բացատրեցինք, թե ինչպես հավատացյալ քրիստոնյան պետք է ի հարկին ինքն իրեն կամովին զրկանքի ու տառապանքի ենթարկի իր մեղքերը քավելու համար. պետք է իր հոգեկան բոլոր բարի ուժերը հավաքելով՝ աշխատի բարու և ճշմարտի հաղթանակի համար, բարի գործը ստեղծելու համար:

Հիսուս իր քարոզների և պատվերների մեջ խիստ էր. նա իրեն հետեւողներին չէր խոստանում ո՛չ հարստություն, ո՛չ փառք, և ո՛չ մեկ երկրային երջանկություն, այլ պահանջում էր, ընդհակառակը, որ ամեն մեկը իր հարստությունը, եթե ունի իսկ, բաժանի աղքատներին և իր փշոտ ճանապարհին հետեւ: Իրեն դիմող հարուստ պատանուն Հիսուս պատասխանում է. «Գնա վաճառիր քո ունեցվածքը ու տուր աղքատներին, և երկնքում գանձեր կունենաս. և դու արի իմ ետևից» (Մատթ. ԺԹ, 21):

Իսկ մի ուրիշ տեղ իր աշակերտներին պատվիրում է. «Եթե մեկը կամենում է իմ ետևից գալ, թող ուրանա իր անձը, վերցնի իր խաչը և գա իմ ետևից» (Մատթ. ԺԶ, 24):

Ի՞նչ է այդ խաչը, եթե ոչ մարդկային խղճի վրա ծանրացող մեղքերի ծանր բեռը:

Սակայն, որպեսզի Հիսուսի պատվերները լոկ խոսքեր չմնան, այլ իր ժամանակակիցների և ապագայի վրա իրենց խոր ազդեցությունը թողնեն, պետք է, որ ինքը՝ Հիսուս, գերագույն ապացույցը տար, թե ինքը իր խաչը պիտի տանի մինչև վերջ, ոչ որպես բեռը իր մեղքերի, այլ բոլոր մարդկանց, ամբողջ մարդկության մեղքերի խաչը:

Գերագույն, կենդանի ապացույցը, որով Հիսուս ազդում է մարդկային գիտակցության վրա, որով ցնցում է մարդկության խիղճը, այդ իր զոհաբերությունն է:

Այն Հիսուսը, որ պահանջում է մարդկանցից սխալն ու չարը ճանաչել, մեղքը խոստովանել, զղջումի գալ ու ամեն բան զոհել, ամեն մի նյութական բարիքից և աշխարհիկ վայելքից հրաժարվել՝ բարոյականը փրկելու համար, այդ Հիսուսը ինքը գերագույն օրինակն է տալիս իր զոհաբերու-

թյամբ, որ կատարվում է բոլոր մարդկանց փրկության համար. «Մեզ՝ մարդկանց համար և մեր փրկության համար»:

Հիսուս «Որդի մարդոյ» եղավ «Որդի Աստուծոյ», Հիսուս եղավ Քրիստոս, այսինքն՝ Փրկիչ:

Առանց Հիսուսի տառապանքի ու խաչելության, առանց Գողգոթայի վրա տեղի ունեցող զոհաբերության խորհրդի, նոր Ուխտը՝ Քրիստոնեական կրօնը, պիտի զրկվեր իր ամենից հիմնական ու էական արժեքից:

Քրիստոնեությունը հիմնվում և կառուցվում է այդ զոհաբերության խորհրդի վրա:

Մինչ հրեաները իրենց կրօնի ու հավատքի ամրացման համար երկնքից նշաններ են հայցում, իսկ հեթանոսները խնդրում են իմաստություն, մենք՝ Քրիստոնյաներս, գոչում է Պողոս առաքյալը, քարոզում ենք «Խաչեցյալ Քրիստոսին»:

Ահա այս պատճառով է, որ, որպես նոր Ուխտի գերագույն խարիսխ-զաղափար, Հիսուսի զոհաբերությունը վերածվեց մի խորհրդի, որը արարողության ձևերով, աղոթքներով ու երգերով նվիրագործվեց Ս. Պատարագ անվան տակ:

Պատարագը (*Liturgie*) իր բառացի իմաստովն իսկ նշանակում է զոհաբերություն: Զոհաբերություններ անելու սովորություններ մյուս կրօններն էլ ունեին: Հեթանոսներն էլ, հրեաներն էլ կենդանիներ էին բերում տաճար և զոհում էին դրանք այն հավատքով, որ իրենց մարդկային մեղքերը կենդանին իր վրա կվերցնի ու կզոհվի՝ այսպիսով սրբելով իր տիրոջ հոգին այդ մեղքերից:

Հիսուս Ժիտեց այդ կեղծ «զրությունը»: Նա պատվիրեց մարդկանց, որ ամեն մեկը անձնապես քավի իր մեղքը, ամեն մեկը՝ իր խղճի առաջ:

Ու գերագույն ապացույցը ինքը տվեց իր զոհաբերությամբ՝ մարդկության մեղքերի համար: Հիսուս մարդկանց մեղքերի մուրհակը, պարտքը վճարեց իր խաչելությամբ ու մահով:

Ծնորհալին «Նորոգող տիեզերաց» շարականի մեջ ասում է.

Երբ գոչեցիր «Էլի Էլի»-Շ
Երկրի հիմքերը տատանվեցին,
Եվ վարագույղը հին օրենքի
Պատովում էր վերից ներքև:
Արդ և շարժվող քարերի հետ
Անշարժ սիրտս բարին շարժիր,

Վարագույի պատովելու հետ՝
Ի՞ն Իին մուրհակն էլ պատոիր:

Հիսուսն է, որ խաչի վրա զոհված ժամանակ պատռեց «օգիր պարտին», այսինքն՝ մեղքերի գիրը:

Նույն գաղափարը արտահայտվում է նաև նկարչության մեջ: Եկեղեցական պատկերներ կան, թեև հազվագյուտ, որտեղ Հիսուս խաչի վրա ներկայացվում է ձեռքին բռնած մի պատռված թուղթ:

Այդ պատռված թուղթը խորհրդանշում է մարդկանց մեղքերի մուրհակը, որը Հիսուս իր զոհաբերությամբ վճարեց ու պատռեց:

Քրիստոնյաները, սկզբից ևեթ ըմբռնելով Հիսուսի զոհաբերության հիմնական նշանակությունը, այն պաշտամունքի հատուկ արարողության վերածեցին:

Առաջին դարից իսկ, քրիստոնյաները այդ արարողությունը սկսում են կատարել, ընական է, նախնական ձեռով: Հետագային, այդ նախնական պատարագի արարողությունը ճոխանում է, փոփոխություններ է կրում, և մի քանի դար շարունակ հայրապետներ և ներշնչված կրոնականներ կատարելագործում են այն:

Ուրեմն, Ա. Պատարագը, որ մեր եկեղեցու մեջ մատուցվում է ամեն կիրակի, Հիսուսի զոհաբերության խորհուրդն է, որով ամեն հավատացյալ մի պահ վերանում է ու հոգով վերապրում է նրա տառապանքը և նրա անսահման սերը հանդեպ մարդկանց, որոնց համար զոհվեց:

Դրանից չպետք է հետևեցնենք, սակայն, թե քանի որ Հիսուս մեր մեղքերի համար զոհվեց, այլևս, ուրեմն, մենք մեղք չունենք ու առանց խղճի խայթի կարող ենք ապրել: Նման ըմբռնում, անշուշտ, շատ միամիտ պիտի լիներ և բոլորովին կեղծ:

Հիսուս իր զոհաբերությամբ՝ մեղքը վերացնելու, չարը խափանելու գաղափարի գերագույն ապացույցը տվեց, մեծագույն տուրքը վճարեց, որպես աշխարհասասան օրինակ մարդկության համար:

Հիսուսի զոհաբերությամբ ամեն քրիստոնյայի համար անխորտակելի ուժ է՝ թե՛ չարն է հաղթահարված, թե՛ մեղքից ազատվելու ճանապարհն է բացված: Այդ ճանապարհը Հիսուսի ավետարանն է, նրա թողած կտակը, որին, եթե հավատանք և հետևենք, կիմանանք սրբել մեր մեղքերից այն միջոց-

ներով, որոնց մասին արդեն խոսեցինք:

Ահա, ուրեմն, Ս. Պատարագի Հիմնական իմաստը և նրա խոշոր նշանակությունը քրիստոնյայի հոգեոր ապրումների մեջ:

Այժմ անցնենք Ս. Պատարագի արարողության բացատրությանը՝ կարելի եղածի չափ հասկանալի ձևով:

Հայաստանյայց Եկեղեցին, ինչպես հայտնի է բոլորին, պատմական հնագույն Եկեղեցիներից մեկն է, և նրա գոյությունը սկիզբ է առնում առաքելական դարից: Թաքուն և հալածական կյանք ապրելուց հետո, չորրորդ դարի սկզբին, 301 թվականին, քրիստոնեությունը պաշտոնապես հռչակվում է հայ ժողովրդի պետական կրոն՝ Ս. Գրիգոր Լուսավորչի օրով և նրա ձեռքով:

Բնական է, որ Հայերը առաջին դարից իսկ սկսած պատարագ են մատուցել, Հավանաբար շատ նախնական ձևի տակ, որ մեզ անհայտ է:

Չորրորդ դարում, սակայն, երբ սկսեցին կառուցվել Եկեղեցիները, ու կազմակերպվեց հայ հոգեորական դասը, Ս. Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայից վերադարձին, իր հետ

բերեց, Հավանաբար, Պատարագամատույց, որ իր ժամանակի մյուս եկեղեցիների մեջ գործածական էր, բայց որն այսօր մեզ ստույգ ծանոթ չէ:

Անմիջապես ասենք, որ ցարդ բազմաթիվ պատարագամատույցներ են ծանոթ, որոնք պատմության ընթացքին խմբագրվել են զանազան հայրապետների և ձեռնհաս կրոնականների կողմից, բնական է, նվիրված նույն խորհրդին և, սակայն, ինչ-ինչ տարբերություններով՝ աղոթքների, քարոզների խմբագրման, ծիսական արարողությունների, երաժշտության և այլ տեսակետներից:

Մեր ազգային ավանդությունը մեր այսօրվա պատարագամատույցը վերագրում է Ս. Գրիգոր Լուսավորչին և այլ հայազգի հայրապետներին, որոնք հավելումներ են կատարել:

Սակայն թվում է՝ պատմական-բանասիրական ուսումնասիրությունները գալիս են ապացուցելու, որ Հայաստանյայց Եկեղեցին 5-րդ դարի սկզբին գործածել է Ս. Բարսեղ Կեսարացու Պատարագամատույցը, իսկ հետագայում այն ենթարկել է փոփոխության՝ հիմնվելով, մանավանդ, Ս. Գրիգոր Նազիան-

գացու Պատարագամատույցի վրա, որը սխալմամբ մեզ մոտ կոչվում է «Աթանասյան» Պատարագամատույց (տե՛ս Հ. Հովսեփ Գաթրճյանի նշանավոր գործը՝ «Սրբազն պատարագամատույցք Հայոց», Վիեննա, 1827):

Մեր Պատարագամատույցի մեջ կան նաև աղոթքներ Հովհաննես Ոսկեբերանից, օրինակ՝ «Որ օրինես զայնոսիկ»-ը, և Ս. Գրիգոր Նարեկացուց, ինչպես նաև այլ և այլ մանր փոփոխություններ, որ բնականորեն, առաջ են եկել պատմական կյանքի և հոլովույթի օրենքով:

Տասներորդ դարում, սակայն, Հայոց Պատարագամատույցը արդեն ստանում է իր վերջնական ձևը, որի մասին խոսում են ժամանակակից նշանավոր դեմքեր՝ Խոսրով Անձեացին և Ներսես Լամբրոնացին:

Այստեղ հիշենք, որ ուրիշ Եկեղեցիներ, մի քանի պատարագամատույցներ ունեն, իրարից տարբեր, որոնք բոլորն էլ իրենց համար մնում են գործածական:

Օրինակ, Մեծ Պահոց ընթացքին Բուռմին Օրթողոքս Եկեղեցին, փոխնիփոխ, տարբեր պատարագամատույցներով է կատարում Ս.

Խորհրդի արարողությունը:

Հայաստանյայց Եկեղեցին, Հնուց ի վեր, միաժամանակ մի քանի պատարագամատույցներ չի գործածել, այլ ընդունել է մեկ պատարագամատույցի գրությունը:

Մեր այսօրվա Ս. Պատարագի արարողությունը, իր նախնական ձևի մեջ, թեև օտար պատարագամատույցի թարգմանություն է և, սակայն, դարերի ընթացքին իր կրած փոփոխություններով ու հավելումներով, իր հայոց լեզվի կատարելությամբ, ծիսական ուրույն նկարագրով և, մանավանդ, գուտ հայկական երաժշտությամբ՝ վերածվել է ազգային գլուխգործոցի, ուր մեր հոգելույս նախնիները իրենց հոգու աղամանդն են բյուրեղացրել՝ մեզ ժառանգ թողնելով հոգեոր և մշակութային անփոխարինելի մի գանձ:

Հիրավի, մեր Ս. Պատարագը միայն կրոնական գանձ չէ, այլ նաև մշակութային մի արժեք:

Մշակութային մի արժեք՝ գրաբարի անձառելի ձևերի և երաժշտության աստվածային ներդաշնակությունների շնորհիվ:

Եվ, երբ Ս. Պատարագի վերացման պահերին մեր աղոթքները խնկով ու երգով դեպի

վեր են բարձրանում, կարծես, աստվածային խորհուրդը և մեր աստվածային լեզուն մրցում են իրար հետ և մնում հավասար և իրար արժանի՝ սրբազն խորհուրդը և մեր ոսկեղայան լեզուն:

Ս. Պատարագին մասնակցող գլխավոր դերակատարներն են պատարագիչ քահանան, սարկավագը և դպիրները:

Դպիրները ներկայացնում են ժողովուրդը, և ինչ որ երգում են, ժողովրդի կողմից են խոսում՝ լինի որպես պատասխան, լինի որպես գոհունակության արտահայտություն կամ խնդրանք:

Ս. Պատարագի արարողություն կատարողը՝ պատարագ մատուցողը, պատարագիչ քահանան է: Նա է, որ իր այդ հանգամանքով արտասանում է աղոթքները՝ լինի իր համար, լինի ժողովրդի համար:

Իսկ պատարագիչ քահանայի ու ժողովրդի (դպիրների) միջև միջնորդը սարկավագն է: Սարկավագը քահանայի օգնականն է՝ սպասավորի դերի մեջ: Նա, նաև սպասավորն ու պաշտոնյան է Աստուծո, նրա սեղանի, նրա խոսքի, այնպես, ինչպես Ս. Ստեփանոսը եղավ որպես նախասարկավագ: Բայց

սարկավագի ամենից կարևոր պաշտոնը միջնորդ լինելն է: Սարկավագն է, որ իր այդ հանգամանքով ուշադիր կերպով հետևում է արարողություններին, և, երբ գալիս է մի կարևոր պահ, անմիջապես դառնալով ժողովրդին՝ նրան ուշադրության է հրավիրում, հրահանգներ ու խորհուրդներ է տալիս և, երբեմն էլ, արտասանում է ժողովրդի կողմից քահանային ուղղված խոսքեր:



ՊԱՇԱՍՈՒՆՔԻ ՄԿԻԶԲԸ

«Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում», - (Քրիստոս պատարագվելով բաշխվում է մեր մեջ) ահա Ա. Պատարագի խորհրդի կարճ և լրիվ իմաստը:

Մարդկության հոգին ու խիղճը ցնցելու և հեղափոխելու նպատակով Հիսուս զոհաբերում է իր անձը: Նա պատարագվում և բաշխվում է մեր բոլորի մեջ՝ մեր բարոյական ազատագրման համար, մեր մեղքերի քայլության և թողության համար: Իր չարչարանքների և մահվան գնով՝ Հիսուս ուժեղացնում է մեր հավատքը իր քարոզած Ավետարանի հանդեպ, որ մարդկությանը ցույց է տալիս բարու և ծշմարտի հավիտենական լույսը և այդ լույսով՝ մարդկային հոգու փրկության և անմահության ճանապարհը:

Այս «ահավոր» խորհուրդը ներկայացնող արարողությունը՝ Ա. Պատարագը, սկսվում է «Խորհուրդ խորին» երգով, որ դպիրները երգում են խորհրդագոր շեշտով, մինչ պատարագիչ քահանան ավանդատան մեջ զգես-

**տավորվում է՝ սարկավագի հետ փոխնիփոխ
սաղմոսներ քաղելով:**

Դպիրները երգում են.

«Խորհուրդ խորին, անհաս, անսկիզբն,

որ զարդարեցեր զվերին պետութիւնդ

ի լառագատ անմատուց լուսոյն,

գերապանձ փառօք զդասս հրեղինաց»:

(Ով խորին խորհուրդ, անհասանելի և անսկիզբ,
որ անմատուց լուսի առաջաստի մեջ զարդարեցիր
վերին պետությունն՝ գերապանձ փառքով՝ հրեղեն-
երի դասերը):

**Հաջորդում են ևս յոթ տուն, որոնք, սա-
կայն, սովորաբար չեն երգվում:**

**Պատարագիչ քահանան՝ զգեստավորված,
ավանդատնից գալիս է դասի մեջ։ Ներս
մտած ժամանակ դպիրները երգում են.**

«Թագաւոր երկնաւոր,

զԵկեղեցի քո անշարժ պահեա՝

եւ զերկրագուս անուանդ քում սրբոյ

պահեա՝ ի խաղաղութեան»:

(Երկնավոր թագավոր, անշարժ պահիր քո եկե-
ղեցին և քո սուրբ ամվան երկրագուներին պահիր
խաղաղության մեջ):

**Ժամարար քահանան եկել է ատյան և
ձեռքերն էլ լվանում, սարկավագի հետ փոխ-
նիփոխ սաղմոսներ ասելով:**

**Անմիջապես հետո, քահանան, երկու
կարճ աղոթքներից հետո բարձր ձայնով խոս-
տովանում է այս խոսքերով.**

«Խոստովանիմ առաջի Աստուծոյ եւ սրբութիւյ
Աստուծածնի եւ առաջի ամենայն սրբոց եւ առաջի
ձեր, հա՛րք եւ եղբա՛րք, զամենայն մեղս, զորս գոր-
ծեալ եմ. քանզի մեղայ խորհրդով, բանիւ եւ գործով,
եւ ամենայն մեղօք, զոր գործեն մարդիկ, մեղայ, մե-
նայլ։ Աղաչեմ զեղո՞ խնդրեցէք վասն իմ լԱստուծոյ
զթողութիւն»։

(Խոստովանում եմ Աստուծոյ առաջ և Սրբութի
Աստվածածնի և բոլոր սրբերի առաջ և ձեր առաջ ով
հայրեր և եղբայրներ՝ իմ գործած բոլոր մեղքերը։ Ո-
րովետուն մեղք գործեցի մտածումով, խոսքերով և
գործով և բոլոր մեղքերով, որ գործում են մարդիկ.
մեղայ, մեղայ։ Աղաչում եմ ձեզ Աստծուց թողություն
խնդրեցեք իհաճ համար)։

**Ի պատասխան, դասից մի ուրիշ քահանա
մոտենում է ժամարարին և ասում:**

«Ողորմեսցի քեզ Աստուած հօգոն եւ թողութիւն
շնորհեսցէ ամենայն յանցանաց քոց՝ անցելոյն եւ
այժմուս, եւ յառաջիկայէն փրկեսցէ։ Եւ հաստատես-
ցէ զքեզ յամենայն գործս բարիս եւ հանգուսցէ զքեզ
ի հանդերձեալ կեանսն»։

(Թող քեզ ողորմի հզորն Աստված և թողություն
շնորհի քո բոլոր մեղքերին՝ անցյալ և արդի, և փրկի

գալիքից: Եվ քեզ հաստատի բոլոր բարի գործերի մեջ, և հանգիստ պարզեցի քեզ հանդերձյալ կյանքում):

Իսկ ժամարար քահանան խոսքը ժողովրդին ուղղելով աղոթում է.

«Ազատեացէ՛ եւ զքեզ մարդասէրն Աստուած եւ թողցէ զամենալն յանցան ձեր. տացէ ժամանակ ապաշխարելոյ եւ գործելոյ զբարիս. ուղղեացէ եւ զառաշիկայ կեան ձեր շնորհօք Սուրբ Հոգուն հօգոն եւ ողորմածն, եւ նմա փառք յափուեան: Ամէն»:

(Զեզ նույնակես թող ազատի մարդասէր Աստված և մերի ձեր բոլոր հանցանձները: Ժամանակ տա ապաշխարելու և բարիք գործելու: Թող ուղղի և ձեր գալիք կյանքը հզոր և ողորմած Սուրբ Հոգու շնորհրով, և ճրան փառք հավիտյան: Ամէն):

Դպիրներն ու ժողովուրդը ժամարարից խնդրում են.

«Յիշեացիր եւ զմեզ առաջի անմահ Գառինն Աստուծոյ»:

(Մեզ ևս հիշիր Աստուծո անմահ Գառի առջն):

Ժամարարը պատասխանում է.

«Յիշեալ լիշիք առաջի անմահ Գառինն Աստուծոյ»:

(Հիշված կլիմեք Աստուծո անմահ Գառի առջն):

Մի ուրիշ աղոթք արտասանելուց հետո, ժամարար քահանան ուղղվում է գեպի ձախ

և սարկավագի հետ սաղմոսներ ասելով՝ բեմ բարձրանում գեպի Սուրբ Սեղան:

Ճամնելով խորանի առջև՝ ժամարարը բարձր ձայնով, եղանակավոր աղոթում է.

«Ի յարկի քում սրբութեան. եւ ի տեղուց փառաբանութեան, հրեշտակաց բնակարանին եւ մարդկան քաւարանիս...» և այլն.

(Քո սուրբ հարկի տակ և փառաբանության տեղում հրեշտակաների այս բնակարանում և մարդկանց այս քավարանում...):

Այս աղոթքը վերջացնելուց հետո՝ մեծ վարագույրը փակվում է, և դպիրները սկսում են ծանր եղանակներով Մեղեղի կամ Տաղ երգել:



ՀԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մեղեղիները երգվելու ընթացքում, ժամարար քահանան ցածրաձայն կարդում է Ս. Գրիգոր Նարեկացու երկու աղոթքները՝ Խորհրդատեսրի միջից, որ դրված է խորանի առջև:

Այս միջոցին, որ ավելի քան տասը բոպե է տեսում, աղոթասեր հավատացյալը կարող է ինքը ևս ծածուկ աղոթել «Հավատով խոստովանին»-ը կամ որևէ այլ աղոթք, մինչ մեղեդու ավարտը:

Ժամարար քահանան, Ս. Գրիգոր Նարեկացու աղոթքները կարդալուց հետո, դնում է սպասը, այսինքն՝ որոշ աղոթքներ արտասանելով, նվիրյալ հացն (նշխարը) ու գինին պատրաստում է սկիհի մեջ՝ գինին լցնելով սկիհի մեջ, իսկ նշխարը զետեղելով մաղղմայի (փոքր մետաղյա ափսե) վրա: Մաղղման դնում է սկիհի վրա, և սկիհը սքողում մաքուր և զարդարուն, աշխատված ծածկոցով: Երեք անգամ խաչակնքում է սկիհը, երեք անգամ ասելով.

«Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ, եւ օրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո»:

(Սուրբ Հոգին պիտի գա քեզ վրա և բարձրյալ զռությունը հովանի պիտի լինի քեզ վրա):

Բացվում է վարագույրը, ժողովուրդը ոտքի է կանգնում, դպիրները սկսում են երգել խնկարկության շարականը։ Ժամարար քահանան բուրվառը ձեռքին, խնկարկելով բեմից իջնում է ներքեւ և շրջում ժողովրդի մեջ ու կրկին վեր բարձրանում՝ միշտ խնկարկելով։

Սույն խնկարկությունը խորհրդանշում է Հիսուսի երկնքից իջնելը, աշխարհի վրա մարդկանց մեջ շրջելն ու կրկին երկինք բարձրանալը։



ԵՐԵԽԱՅԻՑ (ԶՄԿՐՏՎԱԾՆԵՐԻ) ՊԱՏԱՐԱԳ

Երբ արդեն քահանան բարձրացել է Ս. Սեղանի առջև, դպիրների շարականը վերջանում է, և սարկավագի «Օրհնեա՛, Տէր»-ին ժամարարը պատասխանում է։

«Օրհնեալ թագաւորութիւնն Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ, այժմ եւ միշտ, եւ յափառեանս յափառենից։ Ամէն»։

(Օրհնեալ լինի Հոր և Որդու և Սուրբ Հոգու թագավորությունը. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից։ Ամէն)։

Այս վայրկյանից սկիզբ է առնում Ս. Պատարագի առաջին մասը, որ կոչվում է «Երեխայից պատարագ»։

Դպիրները հավուր պատշաճի ժամամուտ են երգում, որից հետո սարկավագը կրկին բարձր ձայնով, քահանային դարձած՝ խնդրանքի շեշտով ասում է. «Օրհնեա՛, Տէր»։

Դրանից հետո սարկավագը շատ անգամներ պիտի կրկնի սույն «Օրհնեա՛, Տէր»-ը։ Ամեն անգամ, երբ քահանան բարձրաձայն ասելու աղոթք ունենա, նախապես սարկավագն

է, որ նրան պիտի դիմի «Օրհնեա՛, Տէր»-ով:

Ի՞նչ իմաստ ունի, ուրեմն, սարկավագի
«Օրհնեա՛, Տէր»-ը:

Արդեն ասացինք, որ ժամարար կամ պատարագիչ քահանան Քրիստոսի ներկայությունն է խորհրդանշում:

Ինչպես որ Քրիստոս մարդկանց մեղքերի համար միջնորդ եղավ Աստուծո առաջ և աղոթեց այդ մեղքերի թողության և հոգիների փրկության համար, այնպես էլ Ս. Խորանի առջև կանգնած պատարագիչը, իբրև թե երկինք բարձրացած լինի, Աստուծո առաջ բարեխոսում է եկեղեցու մեջ եղող ժողովրդի համար: Իսկ սարկավագը, որ ինքն էլ իր կարգին միջնորդ է քահանայի և ժողովրդի միջև ու նաև՝ ժողովուրդը առաջնորդող ուսուցիչ, իբրև այդպիսին, ուրեմն, ժողովրդի պաղատանքների թարգմանն է հանդիսանում: Ահա, ուրեմն, բոլոր այդ խնդրանքներին ընթացք տալով՝ սարկավագը իր ձայնով քահանային լսելի է դարձնում այդ խնդրանքները, երկրից դեպի երկինք ուղղված մի ձայն, որ աղերսում է... «Օրհնեա՛, Տէր»: Սարկավագը ուզում է ասել պատարագիչ քահանային. «Տէր, դու, որ այս պահին Քրիստոսի

ներկայությունն ես խորհրդանշում, օրհնիր մեզ և մեր աղոթքները ներկայացրու Աստուծո առաջ»:

Քահանան լսում է սարկավագի ձայնը և տալիս իր օրհնությունը. «Օրհնութիւն եւ փառք չոր եւ Որդոյ եւ Հոգուն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յափառեան յափառեաից: Ամէն»: Եվ ապա հուզիչ ձայնով ավելացնում. «Խաղաղութիւն ամեննցուն»-ը:

Ժողովուրդը (դպիրները) հասկանալով, որ իր խնդրանքը ընդունվեց և սարկավագի կողմից խնդրված օրհնությունը տրվեց իրեն, գոհունակությամբ պատասխանում է.

«Եւ ընդ հոգուոյ քում» (Եվ քո հոգու համար):

Սարկավագը ավելացնում է.

«Աստուծոյ երկրագեսցուք» (Աստուծո երկրագենք):

Իսկ ժողովուրդը ամբողջացնում է միտքը.

«Առաջի քո, Տէր» ասելով, այսինքն՝ Տէր, քո առջև ենք երկրագում:

Որպես հետևանք սարկավագի և ժողովրդի խնդրանքի, այժմ քահանան աղոթում է այս խոսքերով.

«Տէր Աստուծո մեր, որոյ կարողութիւնդ անքնին է եւ փառքդ անհասանելի, որոյ ողորմութիւնդ ան-

չափ է գթութիւնդ անբար: Դու ըստ առատ մարդասիրութեանդ քում նայեա'ց ի ժողովուրդս քո եւ ի տաճարս յայս սուրբ: Եւ արա՛ ընդ մեզ եւ ընդ աղօթակիցս մեր առատապէս զողորմութիւն քո եւ զգթութիւն: Զի քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ. եւ յախտեանս յախտեանց: Ամէն»:

(Տեր Աստված մեր, կարողությունդ անքննելի է և փառք անհմանալի, ողորմությունդ անչափ է և գթությունդ անբավ: Դու քո առատ մարդասիրությամբ նայիր քո ժողովրդին և այս սուրբ տաճարին: Մեզ ու մեր աղոթակիցներին առատապէս պարզեցիր քո ողորմությունն ու գթությունը: Որովհետև քեզ վայելում է փառք, իշխանություն և պատիվ. այժմ և միշտ և հավիտյանս հավիտեանց: ամէն):

Այս աղոթքից հետո մինչ դպիրները երգում են հավուր պատշաճի՝ ճաշու Սաղմոսն ու Շարականը, քահանան ծածուկ, այսինքն՝ ցածր ճայնով, իր աղոթքներն է շարունակում՝ ինդրելով Աստուծո օրհնությունը, ողորմությունն ու զորությունը հավատացյալ և հուսացյալ հոգիների համար:

Քահանան Ս. Ավետարանը վերցնում է ձեռքը: Երբ դպիրները արդեն վերջացնում են իրենց երգը, սարկավագը ժողովրդի ու-

շագրությունը հրավիրում է «Պոսխումէ» գոչելով, որ Հունարեն լեզվով նշանակում է լսեցե՛ք, կամ՝ ուշադրություն դարձրե՛ք, և կամ ուղիղ նայեցե՛ք դեպի վեր: Այս հրավերը տեղին է, որովհետև այս պահին, սարկավագը Ս. Ավետարանը քահանայի ձեռքից առնելով, այն բարձր բռնած, Ս. Սեղանի շուրջը՝ հյուսիսային կողմից գալիս է հարավային կողմ:

Սույն վերաբերումի ընթացքում ժողովուրդն ու դպիրները երեք անգամ երգում են.

«Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ»:

(Սուրբ Աստված, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչվեցիր մեզ համար, ողորմիր մեզ):

Այս աղոթքը կոչվում է «Երեքսրբեան», կամ Հունարեն բառով՝ «trisaglion», որ նույն նշանակությունն ունի:

Հույն Օրթոդոքս Եկեղեցին «Երեքսրբեան»-ը երգում է առանց «որ խաչեցար վասն մեր»-ի և այդ հավելվածի մեջ ուզում է տեսնել մեր Եկեղեցու ոչ-ուղղափառության ապացույցներից մեկը: Ամեն անգամ, որ Հույն Եկեղեցու հետ միանալու փորձեր են

եղել անցյալի մեջ, նրանց պայմաններից մեկն էլ «Երեքսրբեան»-ի փոփոխությունն է եղել, մի բան, որ մեր Եկեղեցին միշտ մերժել է՝ իր ճիշտ տեսակետի վրա հաստատ համոզում գոյացրած լինելով:

Ժողովուրդը, որ լսել է «Պոսիխումէ» աղդաբարությունը և այժմ տեսնում է Ս. Ավետարանը, որ սարկավագը բարձր բռնելով՝ կատարում է վերաբերումը, Ավետարանը, որ Հիսուսի աստվածությունն է պատմում, բնական վերացումով գոչում է. «Սուրբ Աստուած, սուրբ և հօգօր, սուրբ և անմահ» ու ավելացնում՝ «որ խաչեցար վասն մեր» որով ուզում է ասել՝ թեե սուրբ, հզոր ու անմահ Աստված ես դու, և փրկիչը մարդկության, սակայն, այդ իսկ նպատակով՝ մարդ եղար, հավասարվեցիր մեզ և, նույնիսկ, անարդ մահը կամովին ընդունեցիր խաչի վրա, միշտ մեզ համար. արդ՝ այդ այնքան անսահման խոնարհությանդ համար ողորմիր մեզ:

«Դո՞ւ, Տէ՛ր, լնկա՛լ ի բերանոյ մեղատրացս զերեքսրբեան օրհնութիւնս եւ պահեա՛ զմեզ քոյին քարցրութեամբ. թո՞՛ մեզ զամենայն յանցանս մեր զկամայ եւ զակամայ: Սրբեա՛ զհոգի եւ զմիտս մեր, եւ շնորհեա՛ սրբութեամբ պաշտել զքեզ զամենայն

ատուս կենաց մերոց, բարեխօսութեամբ սրբութեամբ Աստուածածնի եւ ամենայն սրբոց քոց, որք յախտե-նից քեզ հաճոյացան»:

(Դո՞ւ, ո՞վ Տէր, ընդումիր մեր՝ մեղավորմերիս քերանից այս երեքսրբյան օրհնությունը և պահիր քո քաղցրությամբ: Ներիր մեզ մեր կամա և ակամա բոլոր հանցանքները, մաքրիր մեր հոգին ու միտքը և շնորհիր, որ մեր կյանքի բոլոր օրերին սրբությամբ պաշտենք քեզ, բարեխտությամբ սրբութի Աստվածածնի և քո բոլոր սրբերի, որոնք հավիտենից քեզ հաճելի եղան):

«Երեքսրբեան»-ից հետո սարկավագը սկսում է «Համաշխարհական քարոզը»՝ բարձր, սակայն միաժամանակ, մեղմ, հուզիչ ձայնով:

Զէ՞ որ պատարագիչ քահանան Աստուծո առաջ բարեխսուում և աղոթում է ժողովրդի համար: Ուրեմն, սարկավագը լավ իմանալով այս պարագան, դիմում է ժողովրդին՝ նրան ասելու, սովորեցնելու, թե այս պահին ի՞նչ աղոթք կարող է արտասանել և ի՞նչ կարող է խնդրել Աստծուց:

«Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք»: (Եվ խաղաղության համար ևս աղաչենք Տիրոջը):

Արդ՝ նախ խաղաղություն խնդրեցեք,

պատվիրում է սարկավագը և ավելացնում.
«Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի» այ-
սինքն՝ ոչ միայն մեր անձի խաղաղության,
այլ ամբողջ աշխարհի խաղաղության հա-
մար:

Սարկավագը իր պատվերները շարունա-
կելով՝ աղոթեցեք, ասում է, սրբերի, մեր
հայրապետի, վարդապետների, քահանանե-
րի, հանգուցյալ հոգիների համար և այլն:
Ամեն մեկին ժողովուրդը (դպիրները) պա-
տասխանում է. «Տէր, ողորմեա՛»-ով: Սույն
քարոզը վերջանում է մի հրավերով, որ ա-
մեն մարդ աղոթի իր համար և, նաև՝ ամեն
մեկը մյուսների համար՝ անկեղծ ու եղբայ-
րական սիրով տոգորված:

Քահանայի բազկատարած, կարճ աղոթ-
քից հետո կրկին լսվում է սարկավագի «Օրի-
նեա, Տէր»-ը: Քահանան այս անգամ բարձր
ձայնով գոչում է.

«Զի ողորմած եւ մարդասէր ես Աստուած զոլով,
եւ քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ
եւ միշտ...»:

(Որովհետև՝ Աստված լինելով, ողորմած և մար-
դասէր ես, և քեզ վայելում է փառք, իշխանություն և
պատիվ, ալժմ և միշտ...):

Երգերը և շարժումները ընդհատվում են:
Սովորաբար դպիրներից մեկը գալիս է դասի
մեջտեղը և գրակալի վրա դրված մեծ գրքի
միջից (որ կոչվում է ծաշոց) հատվածներ է
կարդում այդ օրվա հատուկ մարգարեներից
և Պողոս առաքյալի թղթերից (նամակներ):
Այդ ժամանակ ժողովուրդը նստում և լսում
է:

Մարգարեներից և առաքյալներից ընթեր-
ցումներ են լինում, նախ՝ որպեսզի ժողո-
վուրդը լսի բարի հորդորներ ու խրատներ,
բայց նաև՝ որպեսզի Հիսուս Քրիստոսի նա-
խագուշակները և, ապա վկաները հիշվեն: Ո-
րովհետեւ, ինչ որ մարգարեները գուշակե-
ցին, առաքյալները ճշմարտապես տեսան ու
լսեցին, և, հետեւաբար, նրանք Հիսուսի կյան-
քի ու խոսքի կենդանի վկաները դարձան:

Դպիրի ընթերցումը ավարտվելուց հետո
նախասարկավագը ուժեղ ձայնով գոչում է.
«Օրի», այսինքն՝ ոտքի ելեք (հունարեն
բառ):

Պատարագիչ քահանան «Խաղաղութիւն
ամենեցուն»-ով խաչակնքում է ժողովրդին,
իսկ դպիրները (ժողովուրդը) պատասխա-
նում են. «Եւ ընդ հոգուոյդ քում»-ով, այսինքն՝

թե այդ խաղաղությունը, որ տալիս ես մեզ,
նաև քո հոգու համար թող լինի:

Նախասարկավագը կրկին պատվիրում է.

«Երկիրածութեամբ լուարուք»:

(Երկյուղածությամբ լսեցեք):

Սարկավագը, Ս. Ավետարանը ձեռքին,
դառնում է ժողովրդի կողմը և հայտնում,
թե որ ավետարանիչից պիտի կարդա, օրի-
նակ՝ «Սրբոյ Աւետարանիս Յիսուս Քրիստոսի որ
ըստ Մատթեոսի»:

(Հիսուս Քրիստոսի Սուրբ Ավետարանից, որ
գրվել է Մատթեոսի կողմից):

Դամբաները, որպես ժողովրդի կողմից գո-
հունակության արտահայտություն, փառք
են տալիս այս վայրկյանին ձայնելով. «Փառք
քեզ, Տէր Աստուած մեր»:

Նախասարկավագը կրկին հրավիրում է
ժողովրդի ուշադրությունը «Պուշտում»-ով,
որպեսզի ամեն մարդ պատրաստ լինի աստ-
վածային խոսք լսելու, իսկ դամբաները ժո-
ղովրդի կողմից պատասխանում են. «Ասէ
Աստուած», այսինքն թե՝ Աստված հիմա կա-
րող է խոսել, պատրաստ ենք, մոտ ենք նրան
ու լսում ենք:

Չմոռանանք ասել, որ Ավետարանը կար-

դալու ժամանակ ժողովուրդը պետք է ոտքի
կանգնի. չէ՞ որ նախասարկավագը նախա-
պես ասել էր՝ Ոտքի եկք:

Ավետարանի ընթերցումը նպատակ ունի
հիշեցնելու ժողովրդին այն առատ ու ան-
չափ սերը, որ Աստված ունեցավ մարդկանց
հանդեպ և աշխարհ առաքեց իր կենդանի
խոսքը՝ իր Որդուն, որ մեզ բերեց հոգու խա-
ղաղություն: Եվ իր տեսակ-տեսակ տնօրի-
նություններով, իր խոսքերով, իր վարդա-
պետություններով, իր կատարած գործերով,
բայց, մանավանդ, իր խաչելությամբ ու
հրաշափառ հարությամբ մեզ անհունորեն
երախտապարտ թողեց:

Իսկ այդ բոլորը մեզ պատգամողը Ավե-
տարանն է. որից հատվածներ են կարդաց-
վում ամեն պատարագի:

Ահա դրա համար է, որ, Ավետարանի ա-
վարտին, ժողովուրդը իր երախտագիտու-
թյունն է հայտնում դպիրների հաղթական
երգով. «Փառք քեզ, Տէր Աստուած մեր»:

Սարկավագը, Ս. Ավետարանը ձեռքին,
դառնում է դեպի խորանը, պատարագիչ
քահանայի կողքին ու բարձր ձայնով արտա-
սանում է «Հաւատոյ Հանգանակը»: Հոգեկան

ոգեորյալ այս պահին է, որ հավատացյալը խոստովանում է իր ուղիղ և ճշմարիտ հավատքի դավանությունը:

Չմոռանանք, միաժամանակ, որ արարողությունների ընթացքը մեզ ավելի է մոտեցնում պատարագի Ս. Խորհրդին, և, հետևաբար, ներելի չէր լինի, որ հավատացյալները ներկա գտնվեին այդ աստվածային խորհրդին՝ առանց նախապես քրիստոնեական հավատքի հանգանակը ընդունած և խոստովանած լինելու:

Եվ ահա այդ է, որ կատարվում է այժմ «Հաւատամք»-ի բարձր և հանդիսավոր արտասանությամբ, որպես մի սրբազն ուխտ, երդում, որին բոլոր ներկաները մասնակցում են ձեռնամած:

«Հաւատոյ Հանգանակը» կոչվում է նաև «Նիկիական հանգանակ», որովհետև խմբագրված է Նիկիայի (Nicea) մեջ տեղի ունեցած առաջին եկեղեցական տիեզերական ժողովի ընթացքին, 325 թվականին: Այդ ժողովին մասնակցել է նաև Հայաստանյայց եկեղեցին՝ պատգամավոր ուղարկելով Ս. Գրիգոր Լուսավորչի որդուն՝ Ս. Արիստակես կաթողիկոսին, երբ Գրիգոր Լուսավորիչը տակավին ապրում էր խոր ծերության մեջ՝ եկեղեցու ղեկավարությունը Արիստակեսին փոխանցած լինելով:

Ս. Արիստակես կաթողիկոսին, երբ Գրիգոր Լուսավորիչը տակավին ապրում էր խոր ծերության մեջ՝ եկեղեցու ղեկավարությունը Արիստակեսին փոխանցած լինելով:

«Հաւատամքի» մեջ եկեղեցին հայտարարում է քրիստոնեական հավատքի հիմնական դավանանքը՝ Աստուծո, Աստուծո Որդի Քրիստոսի և Սուրբ Հոգու մասին, այսինքն՝ Սուրբ Երրորդության նկատմամբ: Ուրիշ եկեղեցիներ, հետագայում, սույն հանգանակը փոփոխությունների և կրծատումների են ենթարկել: Հայ եկեղեցին, որպես ավանդապահ եկեղեցի, այն պահել է նույնությամբ՝ վերջավորությունը միայն ավելացնելով Ս. Գրիգոր Լուսավորչի. «Իսկ մեք փառաւորեսցուք...»-ը:

Մեր եկեղեցին էլ «Հաւատամքի» ավելի երկար մի ձեռ ունի, որ գործածվում է ուրիշ առիթներով, սակայն բուն «Նիկիական» խմբագրությունը Ս. Պատարագի մեջ կարդացվածն է, որ ստորև արտահայտում ենք ամբողջությամբ:

Ուրեմն, «Փառք քեզ, Տէր Աստուած մեր»-ից անմիջապես հետո սարկավագը Ավետարանը բարձրացրած, երեսը դեպի խորանը, արտա-

սանում է «Հայատոյ Հանգանակը», մինչ ժողովուրդը հոտնկայս և ձեռնամած ունկնդրում է:

«Հայատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ, յարարիշն երկնի երկրի, երեւելեաց և ամերեւոթից:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծմեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն՝ յԷութենէ Հօր:

Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ՝ ծնունդ եւ ոչ արարած:

Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենապն ինչ եղել յերկին եւ ի վերայ երկրի, երեւելիք եւ ամերեւոյթք:

Որ յաղագ մեր՝ մարդկան, եւ վասն մերոյ փրկութեան իշեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն՝ Հոգտվն Սրբով:

Որով եառ մարմին, հոգի եւ միտք եւ զամենայն, որ ինչ է ի մարդ ճշմարտապէս եւ ոչ կարծեօք:

Զարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւոր յարուցեալ, ելեալ ի յերկին նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմնէ Հօր:

Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր՝ ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, որոյ թագաւորութեամն ոչ գոյ Վախճան:

Հայատամք եւ ի Սուրբ Հոգին, յամեդն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս եւ ի Մարգարէս եւ յԱւետարանս:

Որ էջն ի Յորդանան, քարոզեաց զԱռաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն:

Հայատամք եւ ի մի միայն Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի:

Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց, ի յարութիւն մեռելոց, ի դատատանն յախտենից՝ հոգոց եւ մարմնոց, յարքալութիւնն երկնից եւ ի կեանսն յախտենական:

Իսկ որք ասեամ՝ էր երբեմն, յորժամ ոչ էր Որդին, կամ՝ էր երբեմն, յորժամ ոչ էր Սուրբ Հոգին, կամ թէ՝ յոչ էից եղեն, կամ յայլմէ Էութենէ, ասեն, լինել զՈրդին Աստուծոյ եւ կամ զՍուրբ Հոգին. եւ թէ փոփոխելիք են կամ այլալելիք, զայնախին նզովէ Կարողիկ եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի»:

(Հավատում ենք մեկ Աստուծո, ամենակալ Հորը, որ արարիշն է երկնիք և երկրի, տեսանելի երի և ամստեսանելի երի: Եվ մեկ Տէր Հիսուս Քրիստոս, Աստուծո Որդուն, ծնկած Հայր Աստծոց միածին, այսինքն Հոր էութունից: Աստված Աստծոց, լույս՝ լուսից, ճշմարիտ Աստված, ճշմարիտ Աստծոց, ծնունդ և ոչ արարած: Նույն ինքը Հոր բնությունից, որով եղավ ամեն ինչ, ինչպես երկնքում, այնպես էլ երկրի վրա՝ տեսանելի և անտեսանելի: Որ մեր՝ մարդկանց և մեր փրկության համար իշմելով երկնիք՝ մարմ-

նացավ, մարդացավ, կատարելապես ծնվեց սուրբ Կույս Մարիամից՝ Սուրբ Հոգով: Որով առավ մարմին, հոգի և միտք և ամեն ինչ, որ կա մարդու մեջ, ճշմարտապես և ո՞չ կասկածով: Չարչարվեց, խաչվեց, թաղվեց, երրորդ օրը հարություն առավ, նոյն մարմնով բարձրացավ երկինք և նստեց Հոր աջ կողմում: Պիտի գա նոյն մարմնով և Հոր փառքով՝ դատելու կենացաներին և մեռածներին, որի թագավորությունը վախճան չունի: Հավատում ենք նաև Սուրբ Հոգուն, անստեղծ և կատարյավ, որ խոսեց Օրենքի, Մարգարեների և Ավետարանների մեջ: Որ իշավ Հորդանանում, քարոզեց առաքյալներին և բնակվեց սրբերի մեջ:

Հավատում ենք նաև միակ, Ընդհանրական և Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

Մեկ մկրտության, ապաշխարության, մեղքերի քավության և թողության, մեռելների հարության, հոգիների և մարմինների հավիտենական դատաստանի, երկարի առքալության և հավիտենական կյանքի:

Իսկ մրանք, ովքեր ասում են, թե կար ժամանակ, որ Որդին չկար, կամ կար ժամանակ, որ Սուրբ Հոգին չկար, կամ թե ոչնչից ստեղծվեցին, կամ ասում են թե՝ Աստուծո Որդին և Սուրբ Հոգին ուրիշ էությունից են եղել և կամ փոփոխական են կամ այլապես, այնպիսին նոյնում է Ընդհանրական և Առաքելական Սուրբ Եկեղեցին:

«Իսկ մեք փառաւորեացուք, որ յառաջ քան զլախտեանս, երկիրագանելով Սրբոյ Երրորդութեան և Միոյ Աստուածութեան՝ Հօր եւ Որդու և Հոգոյն Սրբոյ, այժ եւ միշտ եւ յատեանս յալիտեանից: Անմեն»:

(Իսկ մենք ժամանակներից առաջ եղածին փառավորում ենք երկրագանելով Սուրբ Երրորդությանը և մեկ Աստվածությանը Հոր և Որդու և Սուրբ Հոգու, այժն և միշտ հավիտյան հավիտեանից: Անմեն):

«Նիկիական հանգանակը» արտասանելով՝ ժողովուրդը խոստովանած է լինում ուղիղ հավատքի դավանանքը, և, ուրեմն, այժմ կարող է արժանի լինել աստվածային խորհրդին մոտենալու, Սուրբ Պատարագի մատուցմանը ներկա գտնվելու:

«Հաւատամք»-ից հետո նորից սարկավագն է, որ սկսում է «Խաղաղականք» կոչված երկար քարոզը, որով ժողովրդին պատվիրում է, այժմ ինչ պետք է խնդրի Աստծուց: Միաժամանակ պատարագիչ քահանան էլ աղոթում է ծածուկ և ժողովրդի համար խնդրում այն, ինչ որ սարկավագը հանձնարարում է խնդրել ժողովրդին:

Ահա սարկավագի խոսքերը՝ ուղղյալ ժողովրդին:

«Եւ ես խաղաղութեան զՏէր աղաչեսցուք», այսինքն՝ և խաղաղության համար ևս աղաչենք Տիրոջը, որին ժողովուրդը (դպիրները) պատասխանում է «Տէր, ողորմեա՛»-ով:

Սարկավագը շարունակում է.

«Եւ ես հաւատով աղաչեսցուք և խնդրեսցուք ի Տեառնէ Աստուծոյ եւ ի Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ ի ժամուս պաշտաման և աղօթից, զի արժանի ընդունելութեան արասցէ, լուիցէ Տէր ձալնի աղաչանաց մերոց, ընկալցի զիսնդրուածս սրտից մերոց, թողցէ զյանցանս մեր, ողորմեսցի ի վերայ մեր: Աղօթք մեր եւ խնդրուածք յամենայն ժամ մտցեն առաջի մեծի Տէրութեան Նորա: Եւ նա տացէ մեզ միաբան միով հաւատով եւ արդարութեամբ վաստակել ի գործ բարիս, զի զողորմութեան զշնորհսն իր արասցէ ի վերայ մեր:

Տէրն ամենակալ կեցուսցէ եւ ողորմեսցի»:

(Եվ ևս հավատով աղաչենք և խնդրենք Տէր Աստուց և մեր Փրկչից՝ Հիսուս Քրիստոսից այս պաշտումի և աղոթքի ժամին, որ ընդունելության արժանի անի, Տէրը լսի մեր աղաչանքները, ընդունի մեր սրտի խնդրանքները, թողություն տա մեր հանգանքներին և ողորմի մեզ: Մեր աղոթքներն ու խնդրանքները ամեն ժամանակ մուտք գործնեն նրա Տէրության առաջ: Եվ նա շնորհի կտա մեզ միաբան մեկ հավատով և արդարությամբ բարի գործեր կատարելու: Որպեսզի իր ողորմության շնորհները բերի

մեզ վրա: Ամենակալ Տէրը թող ապրեցմի և ողորմի):

Ժողովուրդը (դպիրները) պատասխանում է.

«Կեցո՛, Տէր» (Ով Տէր, ապրեցրու մեզ):

Սարկավագը շարունակում է քարոզը.

«Զժամ սուրբ պատարագին եւ զառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել ի Տեառնէ խնդրեսցուք»:

(Տիրոջից խնդրենք, որ այս սուրբ պատարագի ժամը և գալիք օրը խաղաղությամբ անցկացնենք):

Ժողովուրդը խնդրում է.

«Ծնորինա՝, Տէր» (Ով Տէր, շնորհի՞ր):

Սարկավագը՝

«Զքաւութիւն եւ զթողութիւն յանցանաց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք»:

(Մեր հանցանքների քավությունն ու թողությունը խնդրենք Տիրոջից):

Ժողովուրդը խնդրում է.

«Ծնորինա՝, Տէր» (Ով Տէր, շնորհի՞ր):

Սարկավագը՝

«Զքրբոյ խաչին մեծ եւ կարող զօրութիւնն յօգնութիւն անձանց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք»:

(Սուրբ խաչի մեծ ու կարող զորությունը մեր անձերի օգնության համար խնդրենք Տիրոջից):

Ժողովուրդը խնդրում է.

«Ծնորմեա', Տէր» (Ո՞վ Տէր, շնորհի՞ր):

Սարկավագը՝

«Եւ եւս միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք»:

(Նաև մեր ճշմարիտ ու սուրբ հավատքի համար միաբանության աղաչենք Տիրոջը):

Ժողովուրդը աղոթում է.

«Տէր, ողորմեա'» (Ո՞վ Տէր, ողորմի՞ր):

Սարկավագը՝

«Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք»:

(Մեր անձերն ու իրար հանձնենք ամենակալ Տէր Աստուծուն):

Ժողովուրդը հաստատելով նույն գաղափարը կրկնում է.

«Քեզ Տեառնդ յանձն եղիցուք»:

(Քեզ, Տիրոջ ենք հանձնվում):

Սարկավագը՝

«Ողորմեա'ց մեզ, Տէր Աստուծ մեր, ըստ մեծի ողորմութեան քում, ասասցուք ամենեքեան միաբանութեամբ»:

(Մեր Տէր Աստված, ողորմիր մեզ քո մեծ ողորմությամբ, բոլորս ասենք միաբանությամբ):

Ժողովուրդը (դպիրները) պատասխանում է.

«Տէր, ողորմեա', Տէր, ողորմեա', Տէր, ողորմեա'»:

(Տէ՛ր, ողորմի՛ր, Տէ՛ր, ողորմի՛ր, Տէ՛ր, ողորմի՛ր):

Սույն երկար քարոզից հետո քահանան էլ, որ իր ծածուկ աղոթքը վերջացրել է արդեն, բարձր ձայնով ասում է.

«Որպէսզի արժանաւոր լինենք գոհութեամբ փառաւորեն զքեզ ընդ Հօր եւ Սուրբ Հոգու հետ. այժմ եւ միշտ եւ յախտեանս յախտենից: Ամէն»:

(Որպէսզի արժանաւոր լինենք գոհությամբ փառավորելու Քեզ Հոր և Սուրբ Հոգու հետ. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամէն):

Եվ ժողովրդին դառնալով՝

«Խսաղաղութիւն ամենեցուն»:

Այնուհետև հաջորդում է քահանայի ամենից ոգեշունչ և գեղեցիկ աղոթքներից մեկը.

«Խսաղաղութեամբ քով, Քրիստոն Փրկիչ մեր, որ ի վեր է քան զամենայն միտս եւ քանս. ամրացն զմեզ եւ աներկիտ պահեա յամենայն չարէ: Հաւասարեա' զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո որք հոգուվ եւ ճշմարտութեամբ քեզ երկիրպագանեն, վասնզի ամենասուրբ Երրորդութեան վայել է փառք, իշխանութիւն եւ պատի, այժմ եւ միշտ եւ յախտեանս յախտենից: Օրինեա'լ Տէր մեր Յիսուս Քրիստոս: Ամէն: Տէր Աստուծ օրինեսցէ զամենեան»:

(Քո խաղաղությամբ, ով Քրիստոս Փրկիչ մեր, որ ամեն մտքից և խոսքից վեր է, ամրացրու մեզ և անվախ պահիր ամեն չարից: Հավասարեցրու մեզ քո ճշմարիտ երկրագուների հետ, որ հոգով և ճշմարտությամբ երկրագում են քեզ: Որովհետև ամենասուրբ Երրորդությանդ վայելում է փառք, իշխանություն և պատիվ. ալժմ և միշտ և հավիտյան հավիտեմից: Օրհնեալ Տեր մեր Հիսուս Քրիստոս: Ամեն: Տեր Աստված թող օրհնի բոլորին):

Այս աղոթքից հետո քահանան հանում է իր գլխի սաղավարտը, իսկ եթե եպիսկոպոս է պատարագիչը՝ խույրը, եմիփորոնը և մյուս զարդերը:

Մինչև հիմա պատարագիչը փառավորված էր գլխին դրած սաղավարտով կամ թագով և այլ զարդերով և խորհրդանշում էր Քրիստոսի անձը: Բայց հիմա, երբ պատրաստվում է Հիսուսի մարմինն ու արյունը սեղանի վրա ընդունել, այլևս հրաժարվում է իր մինչեւ հիմա ունեցած ձեւական դիրքից և ինքն էլ, իբրև խոնարհ մի սպասավոր, պատրաստվում է կատարել Աստուծո Որդու պատարագի ահագին խորհուրդը:

Սրանից հետո քահանան ինքն էլ մի սպասարկու է և սարկավագի օգնությամբ կա-

տարում է պատշաճ արարողություններն ու խորհուրդները: Սարկավագը հետ այսու էլ ժողովրդին քարոզում և սովորեցնում է աղոթել ու խնդրել, իսկ քահանան աղոթում է ժողովրդի համար և Աստուծո առաջ ներկայացնում է նրա խնդրանքները:



ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ՊԱՏԱՐԱԳ

Մինչև այստեղ կատարված արարողությունները կազմում են Ս. Պատարագի առաջին մասը, որ «Երեխայից Պատարագ» է կոչվում, իսկ այժմ սկսվում է երկրորդ մասը՝ «Հավատացյալների Պատարագ»-ը, որ բուն պատարագն է:

Այս բանը ժողովրդին հայտնողը սարկավագն է, որ հանկարծ դառնալով ժողովրդին՝ բարձր ճայնով, անմեղունակ, սակայն հրամայական շեշտով գոչում է.

«Մի՛ ոք յերեխայից, մի՛ ոք ի թերահաւատից եւ մի՛ ոք յապաշխարողաց եւ յանմաքրից մերձեսի յաստուածային խորհրդիս»:

(Երեխաներից, թերահավատներից, ապաշխարողներից ու անմաքուրներից ոչ մեկը չմոտեմա այս աստվածային խորհրդին):

Ուրեմն սարկավագը պատվիրում է. Երեխանները, այսինքն նրանք, որ դեռևս մկրտված չեն, կամ թերահավատները, կամ ապաշխարության մեջ գտնվողներն ու անմա-

քուրները, այսինքն, հոգեպես իրենք իրենց պիղծու մեղավոր զգացողները, չլինի որ մոտենան աստվածային խորհրդին:

Հին ժամանակներում սովորություն էր, որ սարկավագի այս հրամանի վրա, իրոք, ժողովրդի մի մասը՝ նրանք, որ թերահավատ, ապաշխարության մեջ կամ անմաքուր էին, դուրս էին ելնում եկեղեցու ատյանից և մինչև պատարագի վերջը մնում էին գավթի մեջ, աղոթում կամ Ս. Գրքից ընթերցումներ էին կատարում։ Գավիթը ատյանից բաժանված էր պատով։ Այսօր, այդ պատը այլև չկա, և դուրս ենելու սովորությունն էլ վերացած լինելով՝ սարկավագի խոսքերը պարզապես մեր ուշադրությունը հրավիրելու են ծառայում։ Թե ահա մոտենում է աստվածային խորհրդի մեծ պահը։

Իսկ դպիրները խորհրդավոր ձայնով եղանակում են.

«Մարմին տէրունական եւ արիւն փրկչական կայ առաջի։ Երկնային զօրութիւնք աներեւոյթս երգեն եւ ասեն անհանգիստ բարբառով՝ սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց»։

(Տէրունական մարմին ու փրկչական արյունը մեր առջև է։ Երկնային զօրությունները աներևոյթա-

բար երգում են և ասում անհանգիստ ձայնով, սուրբ, սուրբ, Տէր զօրությունների)։

Այս խոսքերով դպիրները արդեն ասում են, թե ինչ խորհուրդ է պատրաստվում, թե ինչ զոհ կմատուցվի։

Սարկավագը ուղղվում է գեալի սրբատուն՝ Ս. Ընծաները (սկիհով) բերելու, բայց նախ դպիրներին ուղղելով իր խոսքը ասում է.

«Սադմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերում, դպիրք, ձայնի քաղցրութեամբ զերգս հոգեւորս»։

(Դպիրներ, մեր Տէր Աստծուն քաղցր ձայնով հոգւոր երգեր և սադմուներ ասեք)։

Եվ իսկապես, դպիրները սկսում են քաղցր ձայնով հոգեշունչ տաղեր եղանակել, որ կոչվում է «Սրբասացութիւն»։

Այդ միջոցին սարակավագը, բուրվառը ձեռքին, առատորեն խնկարկում է Ս. Սեղանին, սրբատանը և, ապա դանդաղ ու հանդիսավոր շարժուձևով մոտենում է սկիհին, վերցնում է այն, ամենայն զգուշությամբ ու երկյուղածությամբ և բերում քահանայի մոտ։

Սրբասացության միջոցին քահանան բազկատարած, երկար աղոթք է կարդում ծածուկ՝ խնդրելով Աստծուց։

«Աղաշեմ զենք, միայն բարերա՛ր և հեշտալուր,
նայեա՛ յիս ի մեղուցեալ եւ յանպիտան ծառայս քո եւ
սրբեա՛ զիոգի եւ զմիտս իմ լամենալն աղծութենէ չա-
րին», և նաև՝ «Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինեն
եւ մի՛ մերժեր զիս ի ծառավից քոց, այլ արժանի արա
մատուցանել քեզ զլնծայս զայս յինեն ի մեղուցեալ
եւ յանարժան ծառայէս քումմէ»:

(Աղաշում եմ քեզ, միակ բարերար և հեշտալուր,
նայիր ինձ՝ քո մեղավոր և անպիտան ծառավին, և
սրբի՛ հոգիս և միտքս չարի ամեն աղծությունից...
Քո երեաը մի դարձրու իհաճանից և մի մերժիր իհաճ քո
ծառաներից: Այլ արժանի արա քեզ մատուցելու այս
ընծաները՝ քո այս մեղավոր ու ամարժան ծառավի
կողմից):

Քահանան այս աղոթքով խնդրում է, որ
Աստված իր միտքն ու հոգին սրբի ամեն տե-
սակ պղծությունից և նրան արժանի անի
Աստծու ծառան լինելու և Ս. Ընծաները (Հի-
սուսի մարմինն ու արյունը) մատուցելու
նրան, այսինքն՝ Աստծուն:

Սրբասացության վերջանալու ժամանակ,
քահանան արդեն վերջացնում է իր աղոթքը,
դառնում սարկավագին, որ արդեն մոտեցել
է իրեն՝ բարձր բռնած քողարկած սկիհը:

Քահանան Ս. Սեղանը և սկիհը խնկարկե-

լուց հետո, սարկավագի հետ, փոխն ի փոխ,
փառաբանական խոսքեր արտասանելով՝
վերցնում է սկիհը սարկավագից, դառնում
ժողովրդին.

«Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն, օրհնութիւն ի
բարձունս» (Օրհնեալ է Տիրոց անուանվ եկողը, օրհ-
նություն բարձունքներուն) խոսքերով խաչակն-
քում և նույն զգուշությամբ ու երկյուղա-
ծությամբ, ահով և դողով, ուղղվում դեպի
Ս. Սեղանը, որի մեջտեղում զետեղված է
սկիհը, որ պարունակում է Ս. Ընծաները:

Սրբասացությունը և վերաբերումը կա-
տարվում են հանդիսավոր ձեռվ ու շար-
ժումներով, որոնք մեր նախնիները բնորոշել
են «Գեղեցիկ ու աստվածավայելուչ կարգ»
բացատրությամբ:

Վերաբերումից անմիջապես հետո քահա-
նան կրկին անգամ լվանում է իր մատները,
որպես մաքրության ու անարատության
նշան, որովհետև սրանից հետո իր մատնե-
րով պիտի դիպչի Սուրբ Մարմնին և Արյա-
նը:

Սա միաժամանակ մի օրինակ է ուղղյալ
ժողովրդին, որպեսզի ներկաներն էլ հոգե-
պես սրբեն և բացարձակ պայծառ մտքով և

մաքուր սրտով մոտենան աստվածային զոհաբերությանը, որը պիտի կատարվի այժմ:

Սարկավագը, ինչպես ուրիշ անգամներ, այս առիթով էլ չի ուշանում հստակորեն իր պատվիրները տալու՝ ժողովրդին հոգեպես պատրաստելու մեծագույն խորհրդին:

Սարկավագի խոսքերը շատ ուշագրավ են, գուցե իր արտասանած քարոզներից ամենից ներշնչվածը, ամենից կատարյալը։ Մտածումի և զգացումի ազնվության գոհար գաղափարներն են, ճշմարտապես դաստիարակիչ և հոգեփոխիչ պատգամներ, որոնք մարդուն բարձրացնում են դեպի հոգեսոր-բարոյական աշխարհի կատարները։

Ահա սարկավագի այս խոսքերը.

«Եւ եւս հաւատով եւ սրբութեամբ կացցուք յահօթս առաջի Սրբոյ Սեղանոյ Աստուծոյ՝ արիւ. մի՛ խղճիւ եւ գալթակղութեամբ, մի՛ նենգութեամբ եւ խորամանկութեամբ, մի՛ պատրանօք եւ խաբէութեամբ, մի՛ երկմտութեամբ եւ մի՛ թերահաւատութեամբ, այլ ուղիղ վարուք, պարզ մտօք, միամիտ սրտով, կատարեալ հաւատով, լցված սիրով, առատորեն ճշխացած ամեն տեսակի բարեգործություններով՝ աղոթքի կանգնենք Աստուծո Սուրբ Սեղանի առջև և գտնենք ողորմության շնորհը, մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Հայտնության և մյուս անգամ գալստյան օրը։ Թող ապրեցնի՛ և ողորմի՛։»

գամ գալստեանն Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Կեցուացէ՛ եւ ողորմնեսցի՛։»

(Եվ ևս հավատքով և սրբութեամբ, ահուղողով աղոթքի կանգնենք Աստուծո Սուրբ Սեղանի առջև։ Ո՛չ մեղքով ու գալթակղությամբ, ո՛չ նենգությամբ, խորամանկությամբ, պատրանքով ու խաբէությամբ, ո՛չ երկմտությամբ և ո՛չ թերահավատությամբ, այլ բարի վարով, պարզ մտօք, միամիտ սրտով, կատարյալ հավատով, լցված սիրով, առատորեն ճշխացած ամեն տեսակի բարեգործություններով՝ աղոթքի կանգնենք Աստուծո Սուրբ Սեղանի առջև և գտնենք ողորմության շնորհը, մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի Հայտնության և մյուս անգամ գալստյան օրը։ Թող ապրեցնի՛ և ողորմի՛։»

Ահա սարկավագը պատվիրում է ժողովրդին այսպես աղոթել։

Եվ իրապես, աղոթքն այն ժամանակ է միայն իմաստ ու հոգեկան արժեք ստանում, երբ այն կատարվում է ոչ թե ձեւի համար իցույց մարդկանց, այլ որպես անկեղծ և խոր ապրումի արտահայտություն։ Բնական է, նույնպես ճշմարիտ և խոր պետք է լինի նաև քահանայի աղոթելու կերպը։ Խոսրով Անձեւացին հետեւյալ պատվերն է տալիս քահանաներին։

«Ո՞վ այր Աստուծոյ, քահանայ սուրբ եւ պատառագիչ Քրիստոսի. յորժամ կացես ի սպասաւորել սուրբ եւ աստուածային խորհրդոյն, մի՛ վեր ի վերոյ, միայն ծայրուք շրթանցդ զաղօթս մատուցես, զի այնպէս անպտուիք են բանք աղօթիցն. եւ ո՛չ ինչ օգտիս ի Ամանէ, եւ ո՛չ միայն անօգուտ, այլ եւ ի դատապարտութիւն եւս իցէ: Այլ, ընդ շարժիլ լեզուիդ, խառնեա՛ զերմութիւն սրտիդ բորբոքմամբ սիրոյ առաջի ինանալի աչացդ եւ ունենալով զայն, առ որս խօսիս»:

(Ո՞վ Աստուծո մարդ, սուրբ քահանա և Քրիստոսի պատարագիչ, երբ կանգնես սպասավորելու սուրբ և աստվածային խորհրդին, վայրիվերո, միայն շրթներիդ ծայրով աղոթք մատուցիր, որովհետև պյառքս աղոթքի խոսքերը անպտուդ են, և ոչինչ չես օգտվի ճրանից, և ոչ միայն անօգուտ, այլև դատապարտության արժանի է: Ուրեմն, լեզուդ շարժելիս խառնիր սրտիդ զերմությունը սիրո բորբոքումով քո ինացական աչքերի առաջ ունենալով ճրան, որի համար ես խոսում):

Սարկավագի քարոզով, քահանան արդեն սկսում է Սուրբ Պատարագի արարողությունը, որով այս պահին է, որ սկիզբ է առնում բուն պատարագը, այսինքն՝ Հիսուսի մարմինն ու արյունը որպես զոհ մատուցելու խորհուրդը: Քահանան աղոթում և օրհնում

է սկիզբ վրա դրված նշխարը (հացը) և միջի գինին: Հետո սկիզբ ծածկոցը բացում է կես չափով և բարձր ձայնով մի կարճ աղոթք է ասում. «Ծնորհօք եւ մարդասիրութեամբ...», խաղաղություն է տալիս ժողովրդին և ձեռնամած, մի քիչ աջ է թեքվում՝ հայացքը առած սկիզբն:



ՈՂՋՈՒՅՆ

Սարկավագիքարողից խորապես ազդված՝ ժողովուրդը ներքին հոգեկան ուժով իր մտքերն ու զգացումները ամփոփել ու կենտրոնացրել է մատուցվելիք պատարագի խորհրդի շուրջ։ Հոգեպես մաքրվել ու հասել է այն վիճակին, որ սարկավագը պահանջում է իրենից։ Եվ որպես այդ հոգեկան վերացման, անարատ սիրո և սրբության զգացումի արտաքին նշան, սարկավագը թելադրում է ժողովրդին.

«Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան. եւ որք ո՞չ եք կարողք հաղորդիլ աստուածալին խորհրդոյս, առ դրուն ելեք եւ աղօթեցեք»։

(Այսինքն՝ Սուլք Համբույրով ողջուզակ տվեք իրար, և նրանք, որ չեք կարող հաղորդվել աստվածային խորհրդին, ելեք դռների մոտ և աղոթեցեք):

Նույն սարկավագն է, որ «Ողջոյն»-ը ներքեւ է բերում դասի մեջ կանգնած քահանաներին և դպիրներին՝ «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ» ասելով, իսկ ողջույն ստացողը պատասխանում է. «Օրինեալ է յայտնութիւնը Քրիստոսի»։

Ողջույնը տրվում է ժողովրդին և ամեն մի հավատացյալ այն փոխանցում է կողքինին՝ նույն խոսքերը կրկնելով, որով ամեն հավատացյալ իր հոգու մեջ խոստովանում է Քրիստոսի գաղափարի հայտնվելն ու հավատում։ Այս պահը արդեն վերացման և սրբության զգացումի ամբողջացումն է. ժողովուրդը ոչ միայն իր ողջույնի համբույրով է խոստովանում, այլ նաև դպիրների հաղթական և ոգեռոյալ երգերով էլ այս զմայլելի խոսքերն է ասում։

«Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ,
Որ Է՛ն Աստուած աստ բազմեցաւ:
Խաղաղութեան ձայն հնչեցաւ,
Սուրբ ողջունիս հրաման տուաւ:
Եկեղեցիս մի առձն եղն,
Համբույս յօդ լրման տուաւ:
Թշնամութիւնն հեռացաւ,
Սէրն յընթանուրս ափուցաւ:
Արդ պաշտօնեա՛ք բարձեալ զձայն՝
Տո՛ք զօրինութիւն ի մի բերան
Միասնական Աստուածութեանն,
Որում Սրովքէքն են սրբաբան»։
(Քրիստոս մեր մեջ հայտնվեց,
Աստվածէն այսեղ բազմեց:
Խաղաղության ձայն հնչեց, այս

Սուրբ ողջուպնի հրաման տրվեց:
Եկեղեցին մի անձ դարձավ,
Համբույրը միության կապ եղավ։
Թշնամությունը հեռացավ,
Սերը սփովեց բոլորի վրա։
Արդ, պաշտոնյաներ
Զայները բարձրացնելով՝
Միաբերան օրհնություն տվեք
Միասնական Աստվածությանը,
Որին Սերովքները սրբաբան են)։

Ուրեմն, Քրիստոս մարդկանց հոգիների մեջ հայտնվելով, խաղաղության ձայն լսվեց,
և սուրբ ողջույնի, այսինքն՝ մարդկանց եղբայրության հրաման տրվեց, որով և ամբողջ եկեղեցին, ամբողջ ժողովուրդը մեկ սիրտ,
մեկ հոգի դարձավ, համբույրը դարձավ միության կապը, թշնամությունը հեռացավ և սերը տարածվեց ընդհանուրիս վրա։ Սարկավագը կրկին ժողովրդին հիշեցնում է, թե սուրբ խորհրդի պահը մոտ է, և, հետեւաբար, ինքն էլ հուզված, դողդոջուն ձայնով ասում է.

«Անիւ կացցուք, երկիրին կացցուք
Բարեւք կացցուք եւ նայեցարուք զգուշութեամբ»։

(Ահով, երկյուղով, բարությամբ մնամք և զգությամբ նայենք):

Ժողովուրդը (դպիրները) պատասխանում է.

«Առ քեզ Աստուած»: (Դեպի քեզ եմք ուղղում մեր հոգիները, ով Աստված):

Եվ ահա սարկավագը հայտարարում է.

«Պատարագ Քրիստոս մատչի Գառն Աստուծոյ»:

(Քրիստոս՝ Աստուծոն Գառը մատուցվում է որպես պատարագ (զոհ)):

Քահանան դառնում է ժողովրդի կողմը և տալիս օրհնություն այս բառերով.

«Ծնորիք, սէր եւ աստուածային սրբարար զօրութիւնն Հօր եւ Որդու և Հոգուն Սրբոյ եղիցի ընդ ձեզ, ընդ ամեննեսեան»:

(Հոր, Որդու և Սուր Հոգու աստվածային սրբարար զորությունը, սէրը, շնորհքը թող լինի ձեզ՝ բոլորին հետ):

Սարկավագը, վերջին անգամ լինելով՝ ազդարարում է.

«Զդունս, զդունս, ամենալա իմաստութեամբ եւ զգուշութեամբ, ի վեր ընծակեցուցէք զմիսս ձեր աստուածային երկիխի»:

(Դոները, դոները [փակեցեք] ամենալա իմաս-

տությամբ և զգուշությամբ: Ձեր մտքերը դեպի վեր բարձրացրեք աստվածային երկյուղով):

Որպեսզի չլինի թե դուքս ելածները՝ թերահավատները, անմաքուրները և այլն, տեսնեն սուրբ խորհուրդը, իսկ ներսը մնացողներին էլ թելադրում է՝ աստվածային վախով ձեր մտքերը դեպի վեր բարձրացրեք: Այսինքն՝ բոլորին պատվիրում է, որ իրենց հոգու և մտքի դռները լավ փակեն և պահպանեն, որպեսզի այդ ահավոր խորհրդի միջոցին այդ դռներից ներս չմտնի որևէ անմաքուր զգացում կամ մտածում:

Ժողովուրդը (դպիրները) պատասխանում է.

«Ունիմք առ քեզ, Տէր ամենալակալ», այսինքն՝ «Մեր ամրող միտքն ու հոգին քեզ հետ են, ով ամենալակալ Աստված»:

Սարկավագը՝

«Եւ գոհացարուք զՏեառնէ բոլորով սրտիւ»:

Ժողովուրդը՝

«Արժանի եւ իրաւ», այսինքն՝ իսկապես շատ արժանի և իրավացի է շնորհակալ լինել:

Մի ծածուկ աղոթքից հետո քահանան բարձրաձայն ասում է.

«Եւ ընդ Սերովբէսն եւ ընդ Քերովբէսն միաձան

սրբասացութեամբ յօրինել նուագս, եւ համարձակապէս գոչելով աղաղակել ընդ նոսին եւ ասել»:

(Սերովքեմերի և Քերովքեմերի հետ միաձայն սրբասացությամբ երգեր հորինել և համարձակորեն գոչելով՝ նրանց հետ աղաղակել և ասել):

Իսկ ժողովուրդը ոգևորությամբ ձայնակցում է այս փառաբանական խոսքերին՝ երգելով.

«Սուրբ, սուրբ, սուրբ, Տեր Զօրութեանց,

Լի՛ են երկինք եւ երկիր փառօք քո.

Օրհնութիւն ի բարձունա.

Օրհնեալի, որ եկիր եւ գալոցդ ես
անուամբ Տեառն:

Ովսաննա ի բարձունա»:

(Սուրբ, սուրբ, սուրբ, Զօրությունների Տեր,

Երկինքն ու երկիրը լի՛ են քո փառքով,

Օրհնություն բարձունքներին:

Օրհնեալի, որ եկար և պիտի զաս

Տիրոջ անվամբ:

Ովսաննա բարձունքներին):



ԿԱՆՈՆ

«Սուրբ, սուրբ» երգելու պահին քահանան ծածուկ արտասանում է մի երկար աղոթք՝ հիշելով և փառաբանելով Աստծուն, որ երբեք չանտեսեց մարդուն և նրա մեղքերը թեթևացնելու և սրբելու մասին խորհեց, որ իր Որդուն այդ նպատակով աշխարհ ուղարկեց: Ապա հիշում է Հիսուսի կյանքը, նրա փրկագործական դերը և վերնատան մեջ վերջին ընթրիքի խորհուրդը, երբ Հիսուս հացը օրհնեց և բաշխեց իր աշակերտներին՝ «այս է իմ մարմինը» ասելով և գինին էլ տալով իբրև իր արյունը:

Այս աղոթքից հետո քահանան բացում է սկիհը, նվիրյալ հացը առնում է ձեռքը, բարձրացնում և խորհրդավոր ձայնով ասում:

«Առե՛ք, կերե՛ք. այս է Մարմին իմ, որ վասն ձեր և բազմաց բաշխի ի քայլութիւն եւ ի թողութիւն մեղաց»:

(Առե՛ք, կերե՛ք, այս է իմ Մարմինը, որ ձեզ և շատերի համար է բաշխում մեղքերի բավության և թողության համար):

Եվ հետո սկիհը բարձրացնելով՝

«Արբէ՛ք ի սմանէ ամենեքեան. այս է Արիւն իմ նորոյ Ուխտի, որ յաղագս ձեր եւ բազմաց հեղանի ի քատոթիւն և ի թողովթիւն մեղաց»:

(Խմե՞ք սրանից բոլորդ, այս է Նոր Ուխտի իմ Արյունը, որ թափում է ձեզ և շատերի մեղերի քավության և թողովթյան համար):

Սրանով տեղի է ունենում Ս. Պատարագի Կանոնը, այսինքն Հիսուսի մարմինն ու արյունը խորհրդանշող հացն ու գինին Աստուծո առջև որպես զոհ է մատուցվում ի տես ժողովրդյան:

Այսօր էլ հացը Քրիստոսի մարմինն է, և գինին՝ նրա արյունը, այնպես, ինչպես երկու հազար տարի առաջ Հիսուս ինքն իսկ ասաց իր աշակերտներին վերջին ընթրիքի պահին:

Ժողովուրդը (դպիրները) երգում է.

«Հայր երկնաւոր, որ զՈրդիդ քո ետուր ի մահ վասն մեր պարտապան պարտեաց մերոց. հեղմամբ արեան Նորա աղաչեմք զքեզ, ողորմեա՛ քո բանաւոր հօսի»:

(Ո՛վ երկնավոր հայր, որ քո Որդում մահվան համաձայն մեզ համար՝ իբրև պարտապան մեր մեղերի: Նորա արյան հեղումով աղաչում ենք քեզ, ողորմի՛ր քո բանական հոտին, այսինքն՝ քո ժողովրդին):

Քահանան ծածուկ աղոթքից հետո բարձր ձայնով աղոթում է Աստծուն ասելով.

«Եւ զքոյս ի քոյոց քեզ մատուցանեմք ըստ ամենայնի եւ յաղագս ամենեցուն»:

Զէ՞ որ պատարագիչը Հիսուսի մարմինն ու արյունը, իբրև զոհ մատուցում է Աստծուծո: Ուրեմն, իբրավմամբ կարող է ասել. «Ո՛վ Աստված, Հիսուս՝ քո Որդին, որ քոնն է և քեզանից, քո կամքով եկավ մեզ, Հիմա էլ այդ նույն Հիսուսին այս խորհրդով քեզ ենք ընծայում, մեր և բոլորի փրկության համար»:

Մինչ դպիրները երգում են. «Յամենայնի օրինեալ ես, Տէ՛ր. օրինեմք զքեզ, գովեմք զքեզ, գոհինամք զքեզ, աղաչեմք զքեզ, Տէ՛ր Աստուծ մեր», քահանան աղոթում է ծածուկ և երեք անգամ օրհնում հացը «որով զիացս օրինեալ՝ մարմին ճշմարտապէս արացես Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի» ասելով, երեք անգամ օրհնում է գինին՝ «Եւ զբաժակս օրինեալ արիւն ստուգապէս արացես Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի», և երեք անգամ էլ, միասին՝ հացն ու գինին նույն խոսքերով: Քահանան աղերսում է, որ աստվածային աներեւոյթ գորությամբ հացը (նշանը) մար-

մին դառնա, և գինին՝ արյուն, Քրիստոսի մարմինը, Քրիստոսի արյունը՝ «որպէսզի եղից սա ամենեցուն մեզ մերձեցելոց՝ լանդատապարտութիւն, ի քաւութիւն եւ ի թողովթիւն մեղաց»:

Այսինքն՝ թող այս հացն ու գինին իրենց էլությունը փոխեն ճշմարտապես և ստուգապես, թող փոխարինվեն, թող վերածվեն Քրիստոսի մարմնի և արյան, որպեսզի մեզ՝ բոլոր մոտեցողներիս համար անդատապարտություն, մեղքերի քավություն ու թողություն լինի:

Թերեւս, հարցնող լինի, թե այդ խորհրդավոր աղոթքների ուժով իրապես հացը մարմնի՝ փոխարկվեց և գինին՝ արյա՞ն:

Բնականաբար, քիմիական տեսակետից, նշխարը հաց մնաց, ինչպես որ առաջ էր և գինին էլ՝ գինի: Սակայն չմոռանակը, որ կրոնական կյանքի մեջ ամեն ինչ խորհուրդ է և գաղափար, ոչ թե նյութական իրականություն:

Եկեղեցուց ներս ամեն ինչ խորհուրդ է, սիմվոլ է, ոչ քարն է քար, ոչ փայտը՝ փայտ, ոչ աղոթքը լոկ խոսք, ոչ երաժշտությունը՝ պարզ երգ, ոչ էլ Ս. Պատարագի հացն ու գինին՝ հաց ու գինի:

Ով որ չի կարող հոգեպես նյութական իրականությունից այն կողմ անցնել և դրա խորհուրդը տեսնել, նրա համար բնական է, որ հացը մնում է հաց, իսկ գինին՝ գինի: Եվ, սակայն, մարդկային հոգեկան կյանքին հատուկ երկույթ է նյութականից աննյութական իրականության բարձրանալը, երկույթ, որ հատուկ է, մանավանդ մարդկային մտավոր և հոգեկոր աշխարհին:

Կրոնական կյանքի մեջ շատ բնական է, որ խորհուրդները կենտրոնական տեղ ունենային, որովհետեւ կրոնը ինքը, իր էլությամբ և բովանդակությամբ, զուտ հոգեկոր երկույթ է՝ մարդկային անհատական ու ընկերային կյանքի հոգեկան-բարոյական անհրաժեշտությունից բխած, անհրաժեշտություն, որ դրսեւրումն ու արտացոլումն է (suprastuctura) կյանքի տնտեսական, հասարակական-քաղաքակրթական որոշ պայմանների:

Ճշմարիտ հավատացյալը, ուրեմն, այդ հացն ու գինին ընդունում է որպես խորհուրդներ, որոնք իր համար դառնում են մարմին և արյուն, որոնք զոհ են մատուցվում մեղքերի թողության և հոգիների փրկության համար:

Այժմ, որ գոհաբերությունը կատարվեց
այդ նպատակով, ճիշտ ժամանակն է, որ ժո-
ղովուրդը Աստծուց խնդրի այն, ինչ որ
մտադրվել էր խնդրել:

Այստեղ, ուրեմն, սկսվում են խնդրանք-
ներն ու հիշատակությունները:



ԽՆԴՐԱՆՔՆԵՐ ԵՎ ՀԻՇԱՏԱԿՆԵՐԻ ՔԱՐՈՉՆԵՐ

Նախ՝ պատարագիչ քահանան է, որ ծա-
ծուկ, հուզիչ աղոթք է արտասանում խնդրե-
լով.

«Սովաւ շնորհեա՝ զսէր, զհաստատութիւն եւ
զընձալի զխաղաղութիւն ամենայն աշխարհի, սրբոյ
եկեղեցւոյ եւ ամենայն ուղղափառ եպիսկոպոսաց,
քահանայից, սարկաւագաց, թագաւորաց աշխարհի,
իշխանաց, ժողովրդոց, ճանապարհորդաց, նաև ելոց,
կապելոց, վտանգելոց, աշխատելոց, եւ որք ի պա-
տերազմուն բարբարոսաց:

Սովաւ եւ օդոց շնորհեա՝ զբարեխսառնութիւն եւ
տնկոց զպողաբերութիւն, եւ ախտացելոց ի պէս-
պէս ցաւ՝ փոլթապէս զառողջութիւն: Սովաւ հան-
գո՛ զամենեսեան յառաջագոյն զննչեցեալսն ի
Քրիստոս, զնախանարս, զհայրապետս, զմարգա-
րէս, զառաքեալս, զվկայեալս, զեպիսկոպոսունս,
զերիցունս, զարկաւագունս եւ զբնաւ ուխտ եկեղեց-
ւոյ քոյ սրբոյ եւ զամենեսեան, որ յաշխարհական
կարգէ՝ զարս և զկանայս հաւատով վախճանեալս»:

(Մրանով (այս սուրբ պատարագով) շնորհիր սեր,

հաստատություն և ըղձալի խաղաղություն ամրող աշխարհին, սուրբ եկեղեցուն և բոլոր ուղղափառ եպիսկոպոսներին, քահանաներին, սարկավագներին, աշխարհի քաջավորներին, իշխաններին, ժողովուրդներին, ճամանակագներին, քամուարկայալներին, վտանգի ենթարկվածներին, չափագներին:

Ծնորմիր օդին բարեխառնություն, արտերին պտղաբերություն, տեսակ-տեսակ հիվանդություն ունեցողներին շտապ առողջություն:

Սրամով հանգիստ պարզեցիր հախապես ի Քրիստոս Անջածներին՝ հախահայրերին, հայրապետներին, մարգարեներին, առաքյալներին, վկաներին, եպիսկոպոսներին, քահանաներին, սարկավագներին և քո սուրբ եկեղեցու համորեն ուխտին, և բոլորին աշխարհականների դասից՝ հավատքով մեռած տղամարդկանց և կամանց):

Այս աղոթքով քահանան խնդրում է, որ Մարմնի և Արյան սույն խորհրդով Աստված Հնորհի սեր, հավատի հաստատություն, աշխարհի խաղաղություն եկեղեցուն, ժողովուրդներին, տեսակ-տեսակ վտանգների և տառապանքների մեջ գտնվողներին և այլն: Խնդրում է նաև

օդերի բարեխառնություն, արտերի պտղաբերություն, հիվանդներին՝ առողջություն և բոլոր ննջեցյալների հոգիներին հանգիստ և ողորմություն:

Այս խնդրանքից հետո պատարագիչը սկսում է հիշատակությունների շարքը: Նախ բարձր ձայնով հիշատակում է:

«Աստուածածնի սրբոյ կուսին Մարիամու եւ Յովիաննու Մ'կրտչի, Ստեփաննոսի Նախավկայի եւ ամենայն սրբոց եղիցի յիշատակ ի սուրբ պատարագու, աղաչնքը»:

(Սուրբ Կոյս Մարիամ Աստվածածնի և Հովհաննես Մ'կրտչի, Ստեփաննոս հախավկայի և բոլոր սրբերի հիշատակը թող լինի այս սուրբ պատարագի մեջ. աղաչում ենք):

Հաջորդում են դպիրների «Յիշեա՛, ՏԵր, եւ ողորհէա՛»-ները, և փոխնիփոխ սարկավագը շարունակում է քահանայի սկսած հիշատակությունները:

Նախ սկսում է «Առաքելոց սրբոց, մարգարեից, վարդապետաց» ևն: Հետո հիշատակում է Հայաստանյայց եկեղեցու սուրբ հայրապետներին.

«Առաջնորդացն մերոց եւ առաջին լուսաւորչացն սրբոց, Թաղէոսի եւ Բարթողիմէոսի առաքելոցն, եւ

Գրիգորի Լուսաւորչին, Արիստակէսի, Վլոդանէսի, Յուսկան եւ Գրիգորիսի, Ներսէսի, Սահակայ, Դանիէլի եւ Խաղայ, Մեարովապ վարդապետին եւ Գրիգորի Նարեկացւոն, եւ Ներսէսի Կլավեցւոն... եւ ամենայն սրբոց, հովուաց եւ հովուապետացն Հայաստանեաց եղիցի լիշտակ ի Սուրբ Պատարագս, աղաչեմք»:

(Մեր առաջնորդների և առաջին սուրբ լուսավորիչների՝ Թաղեսու և Բարթողիմեոս առաքյալների և Գրիգոր Լուսավորչի, Արիստակէսի, Վլուանէսի, Հուսիկի, Գրիգորիսի, Ներսէսի, Սահակի, Դանիէլի, Խաղի, Մեարով Վարդապետի և Գրիգոր Նարեկացու և Ներսէս Կլավեցու (Շնորհալու) և Հայաստանի բոլոր սրբերի, հոգևոր հովիվների և հովիպապետների հիշատակը թող լինի այս պատարագի մեջ. աղաչում ենք):

Հաջորդաբար սարկավագը նորից հիշում է.

«Միանձնացելոց սրբոց, առաքինասէր եւ աստուածուոց» կրօնավորներին, հետո՝ «Թագաւորաց հաւատացելոց սրբոց...» ևն: Եվ վերջացնում է ընդհանուր «ամենայն հաւատացելոց...» հիշատակությամբ:

Սարկավագի քարոզի ընթացքին քահանան ծածուկ աղոթում է նույն նպատակով և

հետո բարձր ձայնով և հանդիսավոր ձևով հիշատակություն է անում Ամենայն Հայոց Հայրապետի, Երուսաղեմի և Կ. Պոլսի Ս. Պատրիարքների, Երկրի թագավորի և ժողովրդի, և նաև Հայ ժողովրդի, Մայր Հայութնիքի՝ Խորհրդային Հայաստանի, որի համար խնդրում է. «Զօրացուցես եւ պահպանեացես յանայր ամս ընդ հովանեաւ ամենազօր Աջոյ քո, ի շնութեան, ի խաղաղութեան եւ յանասանութեան»: (Զօրացնես և պահպանես բոլոր տարիներին քո ամենազօր Աջի հովանու ներքո՝ շինության, խաղաղության և անասանության մեջ):

Դպիրների «Ամէն»-ից հետո սարկավագն էլ հիշատակություններ է անում, կրկնելով, գրեթե, այն, ինչ որ քահանան խնդրել էր:

Այդ ընթացքում քահանան, ծածուկ, շարունակում է հիշատակել ու աղոթել ժողովրդի համար՝ ուխտավորների, աղքատների, հանգուցյալների, ինչպես նաև բոլոր ապրողների բարօրության համար: Եվ հետո բարձր ձայնով օրհնում է ժողովրդին՝ ասելով.

«Եւ եղիցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ եւ Փրկչիս մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ, ընդ ամենեան»:

(Եվ մեծ Աստուծոն և մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի ողորմությունը թող լինի ձեզ և բոլորի վրա):

Այնուհետև հաջորդում է սարկավագի մի նոր քարոզը՝ տեսակ-տեսակ խնդրանքներով և աղաչանքներով, որոնց ամեն մեկին դպիրները պատասխանում են «Տէր, ողորմեա՝»-ով:

Այս քարոզով վերջանում են և՝ խնդրանքները, և՝ հիշատակությունները:
Քահանան բարձրաձայն ասում է.

«Եւ տո՛ր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերան մեր, կարդալ զքեզ, երկնաւորդ Հայր, երգել եւ ասել»:

(Թոյլ տուր մեզ համարձակ ձայնով բացել մեր բերանը, աղաչել քեզ, երկնավոր Հայր, երգել և ասել):

Եվ ժողովուրդը (դպիրները), որպես իր խնդրանքների փակում, երգում է Տերունական աղոթքը՝ «Հայր մեր»-ը, մինչ քահանան ծածուկ աղոթում է Աստծուն.

«... Մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՝ ի չարէ եւ ապրեցո ի փորձութեանէ»:

(...Մեզ մի տար փորձության, այլ փրկիր չարից և ազատիր փորձությունից):

«Հայր մեր»-ից հետո քահանան խաղա-

ղություն է տալիս ժողովրդին և ծածուկ արտասանում «Խոնարհման Աղօթքը» խնդրելով Աստծուց.

«Ողորմեա՝ ժողովրդեանս, որք խոնարհեալ երկիր պագանեն առաջի Աստուածութեանդ քո» ևն:

(Ողորմիր այս ժողովրդին, որ խոնարհված երկր-պագում են քո Աստվածությանը):



ՎԵՐԱՑՈՒՄ

*Խոնարհման աղոթքից հետո, քահանան
բարձր ձայնով ասում է.*

«Քրիստոսի Յիսուսի Տէրամբ մերով, ընդ որում
քեզ՝ Հոգոյի Սրբոյ եւ Հօր ամենակալի վայել է
փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յա-
փառքան յափառք: Ամէն»:

(Քրիստոսով՝ Հիսուսով մեր Տիրոջ միջոցով, որի
մետ Քեզ՝ Սուրբ Հոգուն և ամենակալ Հորը վայել է
փառք, իշխանություն և պատիւ, այժմ և միշտ և հա-
վիտյան հավիտենից: Ամէն):

*Սարկավագը անմիջապես ժողովրդի ու-
շաղությունն է հրավիրում «Պոսխում»-ով,
և քահանան մատներով Սուրբ Մարմինը
բարձրացնում է վեր, այնպես որ ժողովուրդն
էլ տեսնի, ապա խորհրդավոր ձայնով ասում
է. «Ի սրբություն Սրբոց»: (Սրբերի սրբության
համար):*

*Ժողովուրդը սարկավագի ձայնից ազդ-
ված՝ երկյուղով վեր է նայում և տեսնում այն,
ինչ որ ցանկանում էր, այսինքն՝ Սուրբ Մար-
մինը, որ, ինչպես քահանան է ասում, սրբու-
թյուն է, բայց սրբություն է նրանց համար,*

որոնց հոգիները այդ պահին մաքուր են և նորացած, որոնք խոստովանությամբ, ճշմարիտ զղջամբ և անկեղծ արտասուրով լուսավորել են իրենց հոգիների խավարը:

Ահա սրա համար է, որ քահանան ասում է. «Ի սրբութիւն սրբոց», այսինքն՝ սա սրբություն է սուրբ եղողների, ճշմարիտ հավատացյալների համար:

Եվ ժողովուրդը միաբերան աղաղակում է.

«Միայն սուրբ, միայն Տէր, Յիսուս Քրիստոս ի փառ Աստուծոյ Հօր: Ամէն»: Այսինքն թե՝ միայն սուրբը, միայն Տէրը՝ ինքը, Հիսուս Քրիստոսն է:

Հաջորդում են քահանայի օրհնությունները.

«Օրհնեալ Հայր Սուրբ»,

«Օրհնեալ Որդիի Սուրբ»,

«Օրհնեալ Հոգիի Սուրբ»:

և հետո՝

«Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդիոյ եւ Հոգույն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յախտեան յախտենից»:

Ժողովուրդը և դպիրները սկսում են երգել.

«Ամէն: Հայր Սուրբ, Որդիի Սուրբ, Հոգիի Սուրբ»:

Այդ ընթացքում քահանան ծածուկ աղոթում է.

«Ով մեր Տէր Հիսուս Քրիստոս, արժանի արամեզ ճաշակելու քո անարատ Մարմինը և պատվական Արյունը և գտնելու մեր մեղքերի թողությունը»:

Սարկավագի «Օրհնեալ Տէր» խնդրանքի վրա քահանան սուրբ մարմինն ու բաժակը կրկին վերցնում է և դառնալով ժողովրդի կողմը հորդորում է, որ հավատացյալները ճաշակեն այդ սուրբ խորհուրդը, հաղորդվեն նրանով, որովհետեւ նա է և՛ Կյանքը, և՛ Հույսը, և՛ Հարությունը, ինչպես նաև մեղքերի քավությունն ու թողությունը»:

Ահա իր իսկ խոսքերը.

«Ի սուրբ, ի սուրբ պատուական Մարմնոյ եւ յԱրեակ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի, ճաշակեսցո՞ւ սրբութեամբ, որ իշեալ ի յերկնից՝ բաշխի ի միջի մերում: Սա՞ է կեանք, յոյս, յարութիւն, քատութիւն եւ թողութիւն մեղաց: Սադմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ, Սաղմոս ասացէք երկնատր թագաւորիս մերում անմահի, որ նատի ի կառու քերովբեականս»: (Մեր Տիրոց և Փրկչի Հիսուս Քրիստոսի սուրբ, սուրբ և պատվական մարմնից և արյունից ճաշակենք սրբությամբ, որ երկնքից իշմելով բաշխում է մեր մեջ: Այս է կյանք, հուս, հարություն,

քավություն և մեղքերի թռղություն: Սաղմոս ասացեք մեր Տեր Աստծուն, սաղմոս ասացեք մեր երկնավոր ամման թագավորին, որ Աստում է քերովքեական կառքերի վրա):

Պատարագիչ քահանան այս խոսքերը ասելով՝ Ա. Սկիհով խաչակնքում է ժողովրդին, որը ծունկի եկած աղոթում է: Համաձայն վերջերս ընդունված սովորության՝ այս ընթացքում դպիրները և ժողովուրդը «Տէր, ողորմեա՛» են երգում, խնդրելով ամեն մեկը իր անձի կամ ընտանիքի համար՝ երկնային ու երկրային ողորմություն և բարիք:

«Տէր, ողորմեա՛»-ն ամենից սիրված և ժողովրդականացած աղոթքներից մեկն է, որ երգվում է բազմաթիվ եղանակներով, որոնցից մի քանիսը հոգեոր երաժշտության գլուխգործոցներ են:

Քահանայի «Սաղմոս ասացեք» պատվերը սարկավագն էլ է կրկնում, ժողովրդին հրահանգելով.

«Սաղմոս ասացեք Տեատն Աստուծոյ մերոյ, ձայնի քաղցրութեամբ զերգ հոգեւորս: Զի սմա վայել են սաղմոսք և օրհնութիւնք, ալելուք և երգ հոգեւորք: Պաշտօնեա՛ք, հանդերձ երգով սաղմոս ասացեք և զՏէր երկին օրհնեցեք»:

(Դպիրների, սաղմոս ասացեք մեր Տեր Աստծուն, քաղցր ձայնով հոգեր երգեցեք: Որովհետև սրան վայելում են սաղմոսներ, օրհնություններ, ալելուիհաններ և հոգեր երգեք: Պաշտօնաներ, երգով հանդերձ սաղմոս ասացեք և օրհնեցեք երկնքում եղող Տիրոջը):

Ժողովուրդը՝ խորապես հուզված սուրբ պատարագի խորհրդից, երբ իրեն «Սաղմոս երգելու» հրավեր է լինում և՝ քահանայի, և՝ սարկավագի կողմից, նա, որ անհամբեր սպասում էր ահա այս պահին, հոգին պոռթկուն, գոհ ու երջանիկ սրտով գոչում է.

«Թրիատոս պատարագեալ բաշխի ի միջի մերում, ալելուիա:

Զմարմին իւր տայ մեզ կերակուր եւ ատրք զարիւն իւր ցողէ ի մեզ, ալելուիա:

Մատի՛ք առ Տէր եւ առէ՛ք զլոյս, ալելուիա:

Ծաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք, զի քաղցր է Տէր, ալելուիա:

Օրհնեցէ՛ք զՏէր յերկինս, ալելուիա:

Օրհնեցէ՛ք զնա ի բարձունս, ալելուիա:

Օրհնեցէ՛ք զնա ամենայն հրեշտակք նորա, ալելուիա:

Օրհնեցէ՛ք զնա ամենայն զօրութիւնք նորա, ալելուիա»:

(Քրիստոս պատարագված բաշխվում է մեր մեջ,
ալելուիա:

Իր մարմինը տալիս է մեզ իբրև կերակոր և իր
սուրբ արյունը ցողում է մեր մեջ, ալելուիա:

Մոտեցեք Տիրոջը և առեք լուսը, ալելուիա:

Ծաշակեցեք և տեսնք, քաղցր է Տերը, ալելուիա:

Օրհնեցեք Տիրոջը երկնքում, ալելուիա:

Օրհնեցեք նրան բարձունքում, ալելուիա:

Օրհնեցեք նրան, նրա բոլոր հրեշտակներ, ալե-
լուիա):

**Այս ընթացքում պատարագիչ քահանան
ծածուկ աղոթելով՝ սուրբ հացը (նշխարը)
բաժանում է չորս մասերի և թողնում սկիհի
մեջ՝ ասելով.**

«Լուսն Հոգույն Սրբոյ»:

**Ապա շարունակում է աղոթել, միշտ ծա-
ծուկ, խնդրելով, որ Աստված իրեն արժանի
անի «ընդումել զսուրբ խորհուրդն զայս մեզ ի մե-
նաց թողութիւն», որովհետև «ասաց Տէրն մեր Յի-
սուս Քրիստոս, թէ ամենայն, որ ուստի զՄարմին իմ եւ
ըմափ զԱրիւն իմ, կեցցէ յախտեանս»: **Հետևա-
րար՝** «Եւ այժմ աղաշեմ զքեզ, Տէր, մի՛ լիցի սա իման
ի դատապարտութիւն, այլ ի քաւութիւն եւ ի թողու-
թիւն մենաց, յառողջութիւն հոգույ եւ մարմնոյ, եւ ի
կատարումն ամենայն գործոց առաքելութեան: Որ-**

պէսզի արբեսցէ սա զշունչ իմ, եւ զհոգի եւ զմարմին
իմ»:

(...Հայումել այս սուրբ խորհուրդը, որպես մեղքի
թողություն... Մեր Տէր Հիսուս Քրիստոս ասաց.
թէ՝ ով որ իմ մարմինն ուսի ու իմ արյունը ըմպի պի-
տի ապրի հավիտյան... Եվ հիմա, Տէ՛ր, աղաշում եմ
քեզ, թող այս չլինի իման համար դատապարտություն,
այլ՝ մեղքերի քավություն և թողություն, մարմնի և
հոգու առողջություն և բոլոր առաքիմի գործերի կա-
տարում: Որպեսզի սա սրբի իմ շունչը, իմ հոգին և իմ
մարմինը):

**Առանց ընդհատման, քահանան շարու-
նակում է ծածուկ արտասանել Հովհաննես
Ոսկեբերանի մի աղոթքը, որով նույն
խնդրանքներն է ուղղում Աստծուն՝ լինի իր
անձի, լինի ժողովրդի համար:**



ԹԱՇԱԿՈՒՄԵՎ ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Աղոթքները վերջացնելով, մինչդեռ վարագույրը փակ է, քահանան ճաշակում է սուրբ մարմնից մի մաս՝ ասելով.

«Հաւատով ճաշակեմ զուրբ եւ զկենարար եւ զփրկագործ Մարմինս քո, Քրիստոս Աստուած իմ Յիսուս, ի թողութիւն մեղաց իմոց»:

(Իմ մեղքերի թողության համար, հավատով եմ ճաշակում սուրբ և կենարար և փրկագործ քո Մարմինը, Քրիստոս Աստված իմ՝ Հիսուս):

Ապա խմելով բաժակից (սկիհից) ասում է.

«Հաւատով ըմակն զարբարար եւ զմաքրիչ Արիւնս քո, Քրիստոս Աստուած իմ Յիսուս, ի թողութիւն մեղաց իմոց»:

(Իմ մեղքերի թողության համար, հավատով եմ ըմպում սրբարար և մաքրող քո Արյունը Քրիստոս Աստված իմ՝ Հիսուս):

Եվ հետո, անմիջապես, ավելացնում է հետեւյալ աղերսը.

«Մարմին քո անապական լիցի ինձ ի կեանս, եւ սուրբ Արիւն քո ի քատութիւն եւ ի թողութիւն մեղաց»:

(Քո անապական Մարմինը թող կյանք լինի ինձ,
և քո Սուրբ Արյունը մեղքերի քավություն և թո-
ղություն):

Քահանայի ճաշակելուց հետո, այդ ըն-
թացքում կարող են հաղորդվել նաև նրանք,
ովքեր քահանայական կարգից են, որովհետև
Քրիստոս էլ նախ ինքը ճաշակեց և, ապա
տվեց առաքյալներին: Հիսուս առաքյալնե-
րին իրեն համապատիվ համարեց՝ ասելով.

«Ոչ կոչեսցի զձեզ ծառալս... այլ բարեկամ»:

(Ձեզ ծառամեր չկոչեցի... այլ բարեկամներ...)
(Հովհ. ԺԵ, 15):

Այս արարողությունից հետո վարագույ-
րը բացվում է և լսվում է սարկավագի կոչը՝
ուղղյալ նրանց, ովքեր, պիտի արժանանան
հաղորդության:

«Երկիրի եւ հաւատով յառաջ մատիք եւ սրբու-
թեամբ հաղորդեցարուք»:

(Երկյուղով և հավատով առաջ եկեք և սրբու-
թյամբ հաղորդվեցեք):

Սարկավագը նորից է ազդարարում, որ
չպետք է մոտենանք սուրբ խորհրդին ա-
ռանց հոգեկան պատրաստության «լիրք եւ
յանդուզն երեսօք», «իբրև ի սոսկ հաց եւ ի բաժակ,
եւ կամ թէ յաղագս արծաթոյ եւ կամ փառաց»:

Ժողովրդի միջից հաղորդության պատ-
րաստ եղողները ուղղվում են դեպի բեմը:
Քահանան սկիհը ձեռքին, գալիս է բեմի ե-
զերքը, ծունկի է գալիս և սուրբ հացից փոք-
րիկ կտորներ առնելով՝ դնում է հավատաց-
յաների լեզվի վրա, ասելով.

«Մարմին եւ արիւն Քրիստոսի եղիցի քեզ ի
կեանս»:

(Քրիստոսի մարմինն ու արյունը թող քեզ կյանք
լինի):

Հավատացյալը սրբությունը պետք է կու-
տա առանց ծամելու՝ այն հավատով, որ իս-
կապես սրբություն ընդունեց իր մարմնի և
հոգու մեջ, Քրիստոսի էությունից, աստվա-
ծության գաղափարից:

Արդեն ասացինք, որ Ս. Պատարագի ամ-
բողջ խորհուրդը Հիսուսի զոհաբերության
հիշատակության գաղափարն է, և հաղոր-
դության խորհրդով՝ այդ գաղափարը հան-
գում է իր լրումին:

Զէ՞՞ որ ինքը՝ Հիսուս, վերջին ընթրիքի
խորհրդավոր պահին, իր աշակերտներին
հաց ու գինի տալով, ասաց.

«Զայս արարէք առ իմոյ յիշատակի»:

Եվ թե «Ես եմ հացն կենաց՝ իշեալ լերկնից. որ

ուտէ ի հացէս յայսմանէ, կեցցէ յալիտեան» կամ «Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարին իմ, ունի կեանս յանձին իլրում»

(Այս կատարեցեք իմ հիշատակի համար: Ես եմ կյանքի հացը՝ երկարից իշած: Ով որ ուտի այս հացից, հավիտյան կապրի: Ով որ ուտի իմ մարմինը և ըմպի իմ արյունը, կյանքը ունի անձի մեջ):

Ճշմարիտ քրիստոնյայի համար այս պահը հոգեկան վերացման և երջանկության գերագույն պահն է: Հաղորդվելուց հետո հավատացյալը ինքն իրեն հոգեփոխված ու վերանորոգված է զգում, կարծես նորից ծնված լինի, այս անգամ մաքուր, անմեղ ու լուսավոր մի աշխարհի հորիզոններից:

Հավատքի ուժն է, որ իսկապես փոխում և հեղափոխում է մարդու զգացական ու իմացական աշխարհը, որպես ինքնաթելադրության և կամքի ուժ: Հավատքը ինքնաթելադրության և կամքի ուժի գերագույն աստիճանն է:

Դրա համար է, որ մեծ ճշմարտություն կա Հիսուսի այն խոսքի մեջ, որ նա օգտագործում է բազում անգամներ: Այն է.

«Հաւատք քո կեցուցի զքեզ»:

(Քո հավատքը կյանք տվեց քեզ):

Աշխարհի մեջ բոլոր հրաշքները, բոլոր անկարելի կարծվող գործերը, միայն հավատքի և կամքի ուժով են իրագործվում:

Հաղորդության պահին դպիրները շարականներ են երգում:

Սրբությունը ճաշակելուց հետո, հավատացյալը բոլորովին վերացած, այլևս ինքն իրեն մտերմորեն մոտիկ է զգում աստվածությանը, ավելին, այդ աստվածության հայտնությունն ու ներկայությունն է, որ իր մեջ է տեսնում իր հոգու աչքերով, որով դպիրների հետ մեկտեղ գոչում է երկյուղի և ուրախության հուզումով.

«Աստուած մեր եւ Տէր մեր երեւեցաւ մեզ, օրինեալ եկեալ անուամբ Տեառն»:

(Մեր Աստվածը և մեր Տէրը երևաց մեզ, Օրինեալ է Տիրոջ անունով եկողը):

Քահանան դեռ սկիհը ձեռքին՝ գտնվում է բեմի եզերքին, արդ՝ սկիհը մի քիչ բարձրացնում, օրհնում է ժողովրդին՝ ասելով.

«Կեցո՛, Տէր, զժողովուրդս քո եւ օրինեա՛ զժառանգութիւնս քո. հովուեա՛ եւ բարձրացո՛ զսոսա յայսմիետէ մինչև յալիտեան»: (Ապրեցրո՛ւ Տէր քո ժողովրդին, օրհնիր քո ժառանգաներին, հովուիր և բարձրացրո՛ւ սրանց այսուհետև մինչև հավիտյան):

Իսկ դպիրները գոհունակության երջանիկ զգացումով երգում են.

«Լցաք ի բարութեանց քոց, Տէ՛ր,
Ծաշակելով զՄարմին քո եւ զԱրիւն:
Փա՛ռք ի բարձունս կերակրողիդ զմեզ:
Որ հանապազ կերակրես զմեզ,
Առաքեա՛ ի մեզ զմոգեւոր քո օրհնութիւն:
Փա՛ռք ի բարձունս կերակրողիդ զմեզ»:
(Տեր լցվեցինք քո բարիքներով,
Քո մարմինն ու արյունը ճաշակելով:
Փառք բարձունքներում մեզ կերակրողիդ:
Դու՝ որ միշտ կերակրում ես մեզ,
Ուղարկիր մեզ քո հոգևոր օրհնությունը:
Փառք բարձունքներում մեզ կերակրողիդ):
**Այս ընթացքում ժողովրդին բաժանվում
են Սուրբ Սեղանի փշրանքները՝ Օրհնված
Նշխարը և մասը, որով ամբողջ ժողովուրդը
մասնակից է եղած լինում Ս. Խորհրդի օրհ-
նությանն ու չնորհին:**



ԳՈՀՈՒԹՅԱՆ ԱՎՈԹՔ

Մինչ դպիրները երգում են «Լցաք ի բարութեանց քոց»-ը, քահանան վերադառնում է դեպի Սուրբ Սեղանը, և վարագույրը կրկին փակվում է: Պատարագիչ քահանան ճաշակում է սկիհի մեջ մնացած Մարմինն ու Արյունը, մաքրում է սկիհը, սրբում և սքողում՝ ծածուկ ասելով գոհունակության հետևյալ աղոթքը.

«Գոհանամք զքէն, Հա՛յր ամենակալ, որ պատրիաստեցեր մեզ նաւահանգիստ սուրբ զեկեղեցի՝ տաճար սրբութեան, ուր փառաբանի Սուրբ Երրորդութիւնն: Ալէլուիա:

Գոհանամք զքէն, Քրիստոս թագաւոր, որ պարգևեցեր մեզ կենդանութիւն կենարար Մարմնով եւ Արեամբ քով սրբով. շնորհեա՛ զքաւութիւն եւ զմեծ զողորոշութիւն: Ալէլուիա:

Գոհանամք զքէն, Հոգի՛ ճշմարիտ, որ նորոգեցեր սուրբ զեկեղեցի. անարատ պահեա՛ հաւատով Երրորդութեանդ յայսմհետէ մինչեւ յաւիտեան: Ալէլուիա»:

(Գոհանում ենք քեզանից, ով Հայր ամենակալ,

որ մեզ համար նավահանգիստ պատրաստեցիր
Սուրբ Եկեղեցի՝ սրբության տաճարը, որտեղ փա-
ռաքանում է Սուրբ Երրորդությունը։ Ալելուիա։

Գոհանում ենք քեզանից, ով Քրիստոս թագա-
վոր, որ կենարար Մարմանով և սուրբ Արյունով մեզ
կենանություն պարզեցիր. շնորհիր քավություն և
մեծ ողորմություն։ Ալելուիա։

Գոհանում ենք քեզանից, Հոգի ճշմարիտ, որ Առ-
ողքեցիր սուրբ Եկեղեցին, անարատ պահիր Երրոր-
դությանդ հավատքով, ալսուին մինչև հավիտյան։
Ալելուիա։

«Լցաք»-ից հետո սարկավագը հրավի-
րում է ժողովրդին իր գոհաբանության զգա-
ցումը հայտնելու՝ այս սուրբ և անապական
խորհուրդը հավատքով ճաշակած լինելու
համար։

«Եւ եւս հաւատով ընկալեալք յԱստուածային,
սուրբ, երկնային, անմահ, անարատ եւ յանապական
խորհրդոյս, զՏեառնէ գոհացարո՛ք»։

(Դուք ևս գոհացեք Տիրոջից, որ հավատով ըն-
դումկեցիք Աստվածային, սուրբ, երկնային, անմահ,
անարատ ու անապական խորհրդի մեջ)։

**Եվ իսկապես, ժողովուրդը և դպիրները
անմիջապես ձայնակցում են.**

«Գոհանամք զքէն, Տէ՛ր, որ կերակրեցեր զմեզ

յանմահական Սեղանոյ քո։ Բաշխելով զՄարմինդ եւ
զԱրիւնդ ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց
մերոց»։

(Գոհանում ենք քեզանից, ով Տէր, որ կերակրե-
ցիր մեզ քո անմահական սեղանից՝ Մարմինդ ու Ար-
յունդ բաշխելով իրու փրկություն աշխարհի և
կյանք՝ մեր անձերի համար)։

**Այս սրտառուչ երգերի ժամանակ քահա-
նան շարունակում է իր գոհության աղոթքը.**

«Գոհանամք զքէն, Քրիստոս Աստուած մեր, որ
զալսպիսի ճաշակումն բարութեան շնորհեցեր մեզ ի
սրբութիւն կենանութեան. սովիմբ պահեա՝ զմեզ
սուրբս եւ անարատս»։

(Գոհանում ենք քեզանից, Քրիստոս Աստված
մեր, որ այսպիսի բարության ճաշակում շնորհեցիր
մեզ կենանության սրբության համար։ Մրանով պա-
հիր մեզ սուրբ և անարատ...)։

**Գոհության աղոթքներն ու երգերը վեր-
ջացնելով՝ քահանան լվանում է ձեռքերը,
սաղավարտը դնում գլխին և իր պաշտոնը
արդեն վերջացած լինելով՝ պատրաստվում է
հեռանալ Սուրբ Սեղանից։**

ԱՐԹՋ ԵԿԵՂԵՑՈՒ ՄԵԶ

Վարագույրը բացվում է սարկավագի «Օրհնեա՝ Տէր»-ով և քահանան արտասանում է իր վերջին աղոթքներից մեկը: Հովհաննես Ոսկեբերանի խմբագրած աղոթքներից մեկն է, շատ սիրված մեր ժողովրդի կողմից: Մաքուր ու ազնիվ ներշնչումով հորինված աղերսներ են, որոնք, իբրև վերջին խնդրանք, պատարագիչ քահանան ուղղում է առ Աստված:

Քահանան վերջին անգամ երկրպագում է Ս. Սեղանի առջև, Ս. Ավետարանը առնում է ձեռքը և, հարավային կողմից դեպի դասը, դեպի ժողովուրդը գալուց առաջ, այս նշանավոր «Աղօթք ի մէջ եկեղեցւոյ»-ն է արտասանում:

«Որ օրհնես զայնոսիկ, որք օրհնեն զքեզ, Տէ՛ն, եւ սուրբ առնես զյուսացեալս ի քեզ:

Կեցո՛ զժողովուրդս քո եւ օրհնեա՝ զժառանգութիւնս քո. զլրումն եկեղեցւոյ քո պահեա՛:

Սրբեա՝ զսոսա, որք ողջունեցին սիրով զվայել-չութիւն տան քո. դու զմեզ փառաւորեա՝ աստուածա-

յին գօրութեամբ քով եւ մի՛ թողուր զյուսացեալս ի քեզ:

Զխաղաղութիւն պարգեւեա՛ ամենալն աշխարհի, եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քիրստոնեից եւ Հանրապետութեան (Խորհրդային) Հայաստան աշխարհի, եւ զինուրեալ մանկանց նոցա եւ ամենալն ժողովրդեան: Զի ամենալն տուրք բարիք եւ ամենալն պարգեւ կատարեալք ի վերուստ են իշեալ առ ի քեն, որ ես Հայր Լուսոյ, եւ քեզ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յախտեանս յախտենից: Ամէն»:

(Ով Տեր, դու որ օրհնում ես նրանց, ովքեր օրհնում են քեզ և սրբացնում ես քեզ հուսացողներին:

Ապրեցրո՛ւ քո ժողովուրդը և օրհնի՛ր քո ժառանգությունը: Պահի՛ր քո եկեղեցու ամբողջությունը:

Սրբացրո՛ւ սրանց, ովքեր սիրով ողջունեցին քո Տաճակալությունը: Դու մեզ փառավորի՛ր քո Աստվածային զորությամբ և մի՛ լրիր քեզ հուսացողներին:

Խաղաղություն պարզեիր ամբողջ աշխարհին, եկեղեցիներին, քահանաներին, թագավորներին, քրիստոնյաներին, (Խորհրդային) Հայաստանի Հանրապետությանը և նրա զինվորյալ զավակներին և այս ամբողջ ժողովրդին:

Որովհետև բոլոր բարի տուրքերն ու բոլոր կա-

տարյալ պարգևները վերսից են իշել՝ քեզանից, որ Լուսի Հայրն ես, և քեզ վայելում է փառք, իշխանություն և պատիւ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: Ամէն»:

Ուրեմն այս աղոթքը վերջացնելով, քահանան Ա. Ավետարանը ձեռքին՝ բեմից իջնում է ներքեւ, մինչ դպիրները ոգեկորյալ շեշտով երգում են:

«Եղիցի ամուն Տեառն օրհնեալ յայսմիեսէ մինչեւ յախտեան» (երեք անգամ):

(Թող օրհնեալ լինի Տիրոց ամունը պյունիեսու մինչև հավիտյան):

Իսկ քահանան, որ այժմ եկել է դասի մեջ, դեմքը դարձնում է դեպի խորանը և աղոթում.

«Կատարումն օրինաց եւ մարգարեից, դու ես, Քրիստոս Աստուած Փրկիչ մեր, որ լցեր զամենայն Հայուակամ տնօրենութիւնս քո. լի՛ց եւ զմեզ Հոգուվդ քով Սրբով»:

(Օրենքների և մարգարեների կատարումը դու ես, Քրիստոս Աստուած Փրկիչ մեր, որ կատարեցիր հայրակամ քո բոլոր տնօրենությունները. մեզ նոյնակես լցրու քո Սուրբ Հոգով):

Քահանան իր վերջին օրհնությունը տալուց առաջ դառնում է ժողովրդի կողմը և

նրան մոտենալով՝ Ավետարանից մի հատված է կարդում:

Բնականաբար, բուն պատարագի խորհուրդը արդեն վերջացել է, սակայն կարծեք, սույն աստվածային արարողությունը Ավետարանի խոսքով վերջացնելը հոգեկան անհրաժեշտություն է: Ահա, այդ պատճառով է, որ այս պահին, սովորաբար, Հովհաննես Ավետարանչի առաջին գլխի տասից տասնչորս համարներն են կարդացվում:

Այս ընթերցումը, իրականության մեջ, վերջերս ընդունված հավելում է, նվիրագործված մեր ազգային եկեղեցու հայրապետների կողմից:

Ինչ վերաբերում է ընտրությանը, մեր նախնիները շատ իմաստուն և ճաշակի տեր մարդիկ են եղել, որովհետև, իսկապես, Ս. Ավետարանի այս հատվածը ամենից ներշնչված ավետարանչի ամենից ներշնչված էջերից մեկն է:

Այնքան ճշմարտացի աստվածային շնչով է գրված և այնքան գեղեցիկ է իր խոսքով և հայ լեզվի՝ գրաբարի ձևի մեջ, որ ստորև ներկայացնում ենք ամբողջությամբ աշխարհաբար թարգմանությամբ հանդերձ.

«Ի սկզբանե էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն: Նա էր ի սկզբանէ առ Աստուած: Ամենավճ ինչ նովաւ եղեւ, եւ առանց նորա եղեւ եւ ոչ ինչ, որ ինչ եղեւն:

Նովաւ կեանք էր, եւ կեանքն էր Լոյս մարդկան: Եւ Լոյսն ի խաւարի անդ լուսաւորէր, եւ խաւար նման ոչ եղեւ հասու:

Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ՝ անուն նման Յովիրաննէս: Սա եկա ի վկայութիւն, զի վկայեսց վասն Լուսոյն, զի ամենեքեան հաւատացեն նովաւ:

Ո՛չ էր նա Լոյսն, այլ զի վկայեսց վասն Լուսոյն: Էր Լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենավճ մարդ, որ գալոց է յաշխարհ:

Թաշխարհի էր, եւ աշխարհ նովաւ եղեւ, եւ աշխարհ զնա ո՛չ ծանեաւ:

Յիւրան եկան, եւ իրքն զնա ո՛չ ընկալան: Իսկ որք ընկալանն զնա, եւ նոցա իշխանութիւն Որդիս Աստուծոյ լինել, որոց հաւատացեն յանուն նորա:

Ոյք ո՛չ յարենէ եւ ո՛չ ի կամաց մարմնոյ, եւ ո՛չ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան: Եւ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ: Եւ տեսաք զիասու նորա՝ զիասու իբրեւ զՄիածին առ ի Հօրէ, լի շնորհօք եւ ճշմարտութեամբ» (Յովի. Ա, 1-14):

(Ակիզբից էր Բանը, և Բանը Աստուծոն մոտ էր, և Բանը Աստված էր: Նա սկզբից Աստուծոն մոտ էր: Ա-

մեն ինչ ճրանով եղավ, և առանց ճրան ոչինչ չեղավ,
ինչ որ եղավ: Կյանքը ճրանով էր: Եվ այդ կյանքը
մարդկանց Լուս էր: Եվ Լուսը խավարի մեջ լուսա-
վորում էր, և խավարը ճրան չնկածեց:

Կար մի մարդ՝ Աստծոց ուղարկված, ճրա ամու-
ճը՝ Հովհաննես: Սա եկավ որպես վկա, որպեսզի
վկայի Լուսի մասին, որպեսզի բոլորը ճրա միշոցով
հավատան: Ինքը Լուսը չէր, այլ եկել էր, որ վկայի
Լուսի մասին:

Ծշմարիտ Լուսն էր, որ լուսավորում է ամեն
մարդու, որ գալու է աշխարհ: Նա աշխարհի մեջ էր,
և աշխարհը ճրանով եղավ, սակայն աշխարհը ճրան
չճանաչեց:

Յուրայինների մոտ եկավ, բայց յուրայինները
ճրան չընդունեցին: Իսկ ովքեր ճրան ընդունեցին,
ճրանց իշխանություն տվեց լինելու Աստծոն որդի-
ներ, ճրանց, որոնք իր անվանը կհավատան: Նրանք
ոչ արյունից, ոչ մարմահի կամքից, և ոչ էլ այր մարդու
կամքից, այլ Աստծոց ծննդեցին: Եվ Բանը մարմին ե-
ղավ ու բնակվեց մեր մեջ, և տեսանք ճրա փառքը,
որպես փառքը Միաձնի՝ Հոր կողմից՝ լի շնորհով և
ճշմարտությամբ):

Այս Ավետարանի վերջում էլ դպիրները
գոչում են. «Փառք քեզ, Տէր Աստուած մեր», ո-
րից հետո սարկավագը իր վերջին հրավերն

է արտասանում: «Սուրբ Խաչիս աղաչեսցուք
զՏէր, զի սովաւ փրկեսցէ զմեզ ի մեղաց եւ կեցուացէ
շնորհիւ ողորմութեան իւրոյ: Ամենակալ Տէր Աս-
տուած մեր կեցն եւ ողորմեա»:

(Այս Սուրբ խաչով աղաչեմք Տիրոջը, որպեսզի
սրանով փրկի մեզ մեղքերից և իր ողորմության
շնորհիվ մեզ ապրեցնի: Ո՞վ ամենակալ Տէր Աստ-
ված մեր՝ ապրեցրո՞ւ և ողորմի՞ր):

Քահանան այս ինդրանքին պատասխա-
նում է՝ աղոթելով, որ Քրիստոս ինքը օրհնի
ժողովրդին.

«Պահպանիչ եւ յուս հաւատացելոց, Քրիստոս
Աստուած մեր, պահեա՝ պահպանեա՝ եւ օրհնեա՝
զհաւատացեալ ժողովուրդս քո ընդ հովանեաւ սուրբ
եւ պատուական խաչի քո ի խաղաղութեան: Փրկեա՝
յերեւելի եւ յաներեւոյթ թշնամոյն, արժանաւորեա՝
գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ Հոգ-
ույդ Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յախտեանս յախտենից:
Ամէն»:

(Պահպանիչ և հավատացյալների հուս, Քրիս-
տոս Աստված մեր, պահի՛ր, պահպանի՛ր և օրհնի՛ր
քո հավատացյալ ժողովրդին քո սուրբ և պատվա-
կան խաչի հովանու տակ՝ խաղաղության մեջ:
Փրկիր տեսանելի և անտեսանելի թշնամոյց: Արժա-
նի արա, գոհությամբ փառավորել քեզ, Հոր (Աստու-

ծոյ) և Սուրբ Հոգու հետ, այժմ և միշտ և հավիտյանս
հավիտեալից. ամեա):

**Դպիրներն ու ժողովուրդը վերջին օրհ-
նությունն են ուղղում Աստծուն՝ ասելով.**

«Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, յամենայն ժամ
օրհնութիւն նորա ի իմ բերան իմ»:

(Պիտի օրհնեմ Տիրոջը ամեն ժամ. ամեն ժամ
ճրա օրհնությունը իմ բերանի մեջ է):

**Քահանան լսելով ժողովրդի այս հավատ-
քի ջերմ խոսքերը՝ ինքն էլ, վերջին անգամ
լինելով՝ օրհնում է նրան.**

«Օրհնեալ եղերո՛ք ի շնորհաց Սուրբ Հոգուն:
Երթա՛ք ի խաղաղութիւն, եւ Տէր Յիսուս եղիցի ընդ
ձեզ ընդ ամենեսնանդ: Ամէն»:

(Օրհնեալ եղեք Սուրբ Հոգու շնորհներով, գնացեք
խաղաղությամբ և Տէր Հիսուսը թող լինի ձեզ բոլո-
րիդ հետ. ամեա):



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք	5
Վերահրատարակության առթիվ	7
Մեր պատարագը	15
Պաշտամունքի սկիզբը	51
Յառաջադրություն	57
Երեխայից (չմկրտվածների) պատարագ	59
Յավատացյալների պատարագ	83
Ողջույն	93
Կանոն	99
Խնդրանքներ և հիշատակների քարոզներ ..	105
Վերացում	113
ճաշակում և հաղորդություն	121
Գոհության աղոթք	127
Աղոթք Եկեղեցու մեջ	131

Վազգեն վարդապետ Պալճան
(Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոս)

ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ

Արևելահայերենի վերածեց
Տ. Ասողիկ Եպս. Արիստակեսյանը
Խմբագիր՝ Ե. Մելքոնյան

Դրամարակչության
Մնորեն՝ Եղնիկ Արք. Պետրոսյան
Գեղ. Խմբագիր՝ Ղևոնդ Քահանա
Շապիկը՝ Ա. Օհանջանյանի
Մրգագրիչ՝ Է. Աղիքելյան

Ս. Էջմիածին - 2008